



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

26.051

Ն. ՆԵԿՐԱՍՈՎ

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ
ԿՈՂՊԵՐԱՏԻՎԻ
ԴՐԱՄԱԳԼՈՒԹՆԵՐԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿՈՈԹԻ
1926 թ.

11 JUL 2013

26051

15 JAN 2010

Ն Կ

I. ԳԼՈՒԽ

Սեփական միջոցների հիմնական աղբյուրները 3

II. ԳԼՈՒԽ

Կոռպետատիվի անգամի մուծումները

1. Մուտքի վճար	11
2. Փայտվճարներ	12
3. Փայերի գանձումը քաղաքային և բանվորական կոռպետատիվներում	13
4. Անդամների նյութական արտանությունները	17
5. Կոռպերատիվի անդամների վարկային արտանութ.	19
6. Ազիտացիոն աշխատանքը	22
7. Անդամագնարների մուծման ժամկետը	23
8. Լրացուցիչ փայեր	24
9. Փայտվճարային կոմոդանիան գյուղական սպառկող.	25
10. Փայտվճարը մուծելու դյուրություններ	28

III. ԳԼՈՒԽ

Կոռպետատիվի գործառքներից սացվող ոգութը

1. Անդամների մատակարարման գործառքներից սացվող ոգութը	30
2. Միջնորդական-մթերման գործառքներից սացվող ոգութը	33
3. Հումք նյութերի նախնական մշակությունից սացվող ոգութը	36
4. Արտադրությունից սացվող ոգութը	37
5. Կոռպերատիվի առևտուրական գործունեությունից ուղացվող ոգութը	39
6. Պետական պատվերներով կատարվող աշխատանքը	41
7. Նեղանութական գործառքներ	42
8. Ապառազական կոռպերատիվի վաստակի բաշխումը	43

IV. ԳԼՈՒԽ

1. Կոռպերատիվ գրամագլուխներ	45
2. Կոռպերատիվի փայտվճարմագլուխը	47
3. Կոռպերատիվի հատուկ գրամագլուխները	49
4. Անդամների լրացուցիչ պատասխանավորմագլուխները	51

Ն. ՆԵԿՐԱՍՈՎ

3345
7-4546

ՈՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՓԵՐԱՏԻՎԻ
===== ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐԸ =====

Թարգմանություն ողևաբենից



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿՈՈՄԻ

1926 թ.

ՅԵՐԵՎԱՆ

ԳԼՈՒԽ I

ՍԵՓԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՆԵՐԸ

Սպառողական կոռպերացիան Ռուսաստանում իր տրամադրության տակ յերբեք չի ունեցել իր աշխատանքը զարգացնելու բավարար միջոցներ։ Ավելի վատ գրության մեջ են յեղել նրա սեփական միջոցները, վորոնց ամեն մի կոպեկը հավաքվել ե անընդհատ ու լարված աշխատանքով։ Յերբ մոտենում են այն հարցին, թե վճրտեղից են առաջանում սպառողական ընկերության միջոցները, առաջին հայացքից թվում ե, վոր այդ միջոցների աղբյուրները նույնքան բազմազան են, վորքան նրանց կազմող գըամազգլուխների անունները, որինակ՝ հիմնական, փայտարային, շրջանառության, պահեստի և այլն։ Սակայն այս ամբողջ բազմազանությունն ըստ եյության հանդում և սեփական միջոցների մի քանի հիմնական աղբյուրներին։

Ամենակարևոր տեղը գրավում են Կոռպերատիվի անգամի մուծումները, վոր իրենց ձեռքով ու անուններով բազմազան են, առաջ գալիս ե այն ոգությունը, վոր ստացվում ե Կոռպերատիվ ընկերության առեվտրական զործառքներից։ Բոլորովին առանձին պետք ե քննել այն դանական հատկացնումները, վոր անում են կողմնակի անձինք ու հիմնարկություններ (դուստրիա)։

Կոռպերատիվ տեսակետից մոտենալով, պիտի ասենք, վոր կոռպերացիայի սեփական միջոցների կուտակման ամենառաջիղ ու անվիճելի յեղանակը—դա կոռպերատիվի անդամավճարների գանձումն ե։ Այդ վճարությունը մեջ ամբողջովին արտահայտվում ե կոռպերատիվ շարժման եյությունը. չե՛ վոր կոռպերատիվ կազմակերպության կարողությունը—համեմատած մասնավոր կապիտալի գործունեյության հետ—հենց այն ե, վոր կոռպերացիան միացնում և հղոր ույժ ե դարձնում կոռպերատիվի առանձին անդամների ինքնին թույլ ջանքերը։

Սնհատ գյուղացին կամ բանվորն իր մի քանի ոռոքիով չի կարող կովել մասնավոր առեստրականի դեմ, վորը փատ ապրանք և վճառում և այն ել բարձր գներով: Բայց յերբ այդ ոռոքին ները վերածվում են անզամավճարների, յերը բազմաթիվ գյուղացիներ ու բանվորներ իրենց անդամավճարները միացնում են կոռպեքտատիվ փայտպամագլխին—դրանով արդեն ստեղծվում է նշակալից մի ույժ, վորով ապրանքը կարելի յե ձեռք բերել մհծաքանակի գներով և կարելի յե համապատասխան վորակով ապրանքի ընտրություն կատարել՝ հաջողությամբ պայքարելով մասնավոր առեստրականի դեմ:

Կոռպիրացիայի լողունգն ասում ե—
Մի՛ՌԻԹՅՈՒՆՆ ՈՒՅԾ Ե.

Այս ճանապարհով—կոռպերատիվի անդամների ինքնազոր-ձունելության ուղիով—մեծ դժվարությամբ են ստեղծվում կոռպերատիվ միջոցները, դժվարությունն այն է, վոր գյուղացիների ու բանվորների մեծ մասը չի ունենում մինչև իսկ այն միքանի ազատ ոռորլիները, վորոնք անհրաժեշտ են անդամավճարի համար. նրանց կանխիկ գրամմերն ստացվելուն պես՝ իսկույն ծախսվում են ամենաանհետածգելի կարիքների վրա: Կոռպերատիվները դժվարանում են փայտավճարներ գանձել նաև այն պատճառով, վոր հաճախ չեն յերեսում այդպիսի վճարութիւնից արագ կերպով սպասվող անմիջական ողուտները: Մինչեւ իսկ զործը լավ գնելու գեպքում կոռպերատիվի միջոցների մեծ մասն սկզբում զարգացրվում է առեւտրի կազմակերպման վրա և քիչ միջոցներն են մնում անդամների կարիքները բավարարելու նպատակով՝ ապրանք ձևոք բերելու համար: Քիչ չի պատճառում, յերբ նոր կ ողմակերպվող կոռպերատիվները առաջին քայլերն անելիս կատարում են սխալներ, վնասներ և կրում են նրա անդամները կորցնում են մինչև իսկ այն չնչին կոռպեկները, վոր հագաքել են անդամագրվություն համար: Ետո հաճախ պատահում են գեղքեր, յերբ կոռպերատիվի աշխատակիցների անշնորհքության ու անփորձության հետևանքով կոռպերատիվ խանութի ապրանքներն ու մթերքները սրբում աթելի վատ, ավելի թանգ են լինում, քան հարեան մասնավոր խանություն: Կոռպերատիվի անդամներն այդ գեղքում վայ հալով իրենց զնումները կատարում են կոռպերատիվը, վորպեսզի պահպաննեն իրենց ստեղծած զործի զոյությունը:

Բայց նման անհաջողությունից հետո դժվար ելինում պրդել անդամներին, զոր իրենց փայտաձարներն ափելագնեն:

Առանց կեղծ ամոթի, պետք և ասել վոր բոլոր այդ
մեղքերն ու դժբախտությունները ԽՍՀՄ սպառկոռպերացիայի
մեջ կրկնակի ուժով արտահայտվել են նրա աշխատանքի
անցյալ այն ժանր ժամանակաշրջանում, յերբ նա Խորհրդա-
յին իշխանության տնտեսական նոր քաղաքականության պայ-
մաններում վերածնվում եր նոր սկզբունքով: Խորհրդային Միու-
թյան բանվորական ու գյուղացիական մասսաները միանգամայն
քայլայվել ելին իմպերիալիստական և քաղաքացիական պատե-
րազմների ընթացքում, բոլորովին հյուծվել ելին՝ շնորհիվ յերաշտ-
ների, սովոր ու բլոկադայի և չունեցին փինանսական ազատ միջոց-
ներ: Ավելացնենք և այն, վոր այն ժամանակ կոռպերատիվ առևտու-
րը վատ եր դրված և աշխատավոր մասսաների համակրանքը չա-
փաղանց չնչին չափով եր գրավում: Յեվ վերջապես, միջոցների
կուտակմանը չափազանց խանգարում եր նաև խորհրդային
դրամանիշների անընդհատ ու խիստ անկումը—այսոր դու ան-
դամագնար մտցրիր՝ վաղին այդ անդամագնարն իր արժեքը կորց-
նում եր: Ահա այս պատճառով, համարյա թե անհույս մի խըն-
դիր եր դառնում սպառողական կոռպերացիայի փայտվածարներ
գանձել:

Այժմ զրությունը բոլորվին այլ ե. կոռպերացիան դարձել է կամագոր և ամբողջովին կառուցվում և աշխատավոր մասնաների ինքնազործունելյությամբ. դրամական ռեֆորմն ստեղծել է նոր ու կայուն զրամ. գյուղացիների ու բանվորների աշխատավարձը նշանավոր չափով բարձրացել և մոտեցել է նախապատճենագյան չափերին. և վերջապես՝ կոռպերատորներն ել երեսց աշխատանքի ընթացքում կատարել են վորոշ նվաճումներ. Այս բոլորն ավելի նպաստավոր պայմաններ են ստեղծում, վորպեսզի կոռպերացիայի սեփական միջոցները հավաքվեն հենց կոռպերացիայի անդամների անդամագնացարներից. Զպեաք և շրջութեալ այս դեպքում յերեխան յեկող դժվարություններից. Ամենից առաջ չպետք է հուսահատվել, վոր միջոցների հավաքումն ստիպված ենք սկսել, համարյա միշտ եւ, ուրբիններից. Մենք չենք առաջինները և վերջիններն ել մենք չենք լինելու. Հիշենք անգլիական սպասկոռպերացիայի նահապետներին—նշանավոր «Ռոչդելյան պիտոներներին»: Նրանք իրենց աշխատանքն սկսել են—մեր զրամով հաշված— 250 ռուբլով

(28 ֆ. ստերլինգ). իզուր չեր, վոր այդ աղքատության վրա չարամիտ կերպով հրճվում եյին նրանց հարեան մասնավոր խանութեաններն ու կոռպերատիվ ձեռնարկումների ուրիշ թշնամիները: Իսկ այժմ, 80 տարի հետո, յեթե վերցնենք անգլիական կոռպերացիայի փայտրամագլուխները միայն—նրանք անցենում են մեկ միլիարդ ռուբլուց:

Յեթե պետք ե ոռւսական որինակ՝ կարող ենք վերցնել Ցենտրոսոյուղը—սպառկոռպերացիայի համամիութիւնական կենտրոնը: Սկսելով իր աշխատանքը 1898 թվին, Ցենտրոսոյուղն ուներ ընդամենը 800 ռուբլի փայտրամագլուխ: համաշխարհային պատերազմի սկզբում (1914 թ.) այդ գումարը հասավ 400,000 ռուբլու—այսինքն՝ ավելացավ 500 անգամ: Իսկ այժմ, 1924 թվին, կը կին 10 տարի հետո, Ցենտրոսոյուղի ամբողջ գըրամագլուխը արդեն անցել է 30 միլիոն ռուբլուց:

Հեշիր կոռոպերատոր.—Մի՛ ՇՓՈԹՎԻՐ ՔՌ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ՑԵՐԵՎԱՆ ՅԵԿԱՂ ԴԺՎԱՐԻԹՅՈՒՆԵՐԻՑ—ՔԵԶԱՆԻՑ ԱՌԱՋ ՄԻԼԻՈՆԱՎՈՐ ՄԱՐԴԻԿ ԵՆ ԱՆՑԵԼ ԱՅԴ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ՑԵՎ ԱՆՑԵԼ ԵՆ ՀԱԶՈՂՈՒԹՅԱՄՄԲ:

Իհարկե, պետք ե խոստովանել, վոր բոլոր յերկրների կոռոպերացիայի միջոցների ստեղծման դործում խոշոր դեր ե խաղացել սեփական միջոցների մի ուրիշ ազրյուրն ևս զա կոռպերացիայի տնտեսական գործունեյության զանազան տեսակներից ստացվող ռուստն ե:

Բայց հենց իսկույն նկատենք, ամենից առաջ, այն խոշոր տարբերությունը, վոր կոռպերատիվ տեսակետից մոտենալով՝ կարելի յե գոտնել կոռպերացիայի ողուտի աղբյուրների միջին իսկակես կոռպերատիվ կարելի յե համարել միմիայն այն աշխատանքը, վորի անմիջական նպատակն ե բավարարել կոռպերատիվի անդամների այս կամ այն կարիքը: Սրան կից հաճախ կատարվում ե նաև կողմնակի, ողուտ առեթերական աշխատանք, վոր ծավալվում ե միմիայն ողուտ քաղելու նպատակով: Այդպիսի աշխատանքը կամ բոլորովին պետք չի լինում կոռպերատիվի անդամների համար, կամ պետք ե գալիս ավելի փոքր

չափերով: Յեկ վերջապես պետք ե առանձնացնել վորոշ տեսակի աշխատանքներ, վոր կոռպերացիան կատարում ե հասարակական ոգուտի նկատառումներով: Շատ հաճախ կոռպերացիան նըման աշխատանքներ կատարում ե պետական կամ հասարակական հիմնարկների հանձնարարությամբ: Ինչքան ել հարգելի ու պիտանի լինի նման աշխատանքը, այնուամենայնիվ այն զուտ կոռպերատիվ գործունեյություն անվանել չենք կարող: Մինչդեռ տնտեսական նոր քաղաքականության կիսարման սկզբնական շրջանում սպառողական կոռպերացիան այդպիսի աշխատանք մեծ չափերով ե կատարել:

Ոգուտի վերոհիշյալ բոլոր ձեռները ՍԽՀՄ-ի սպառկոռպերացիան ոգտագործել ե այն ժամանակաշրջանում, յերբ նա գեռ ևս, մատնանշված պատճառներով, իր անդամներից կամագորական սկզբունքներով չեր կարողանում միջոցներ ստանալ: Այդ ուղղությամբ հատկապես մեծ աշխատանք ե կատարել Ցենտրոսոյուղը:

1921 թվի սեպտեմբեր 1-ին—նոր հիմունքներով կատարվող աշխատանքի սկզբում—Ցենտրոսոյուղի առետրական աշխատանքների համար տրամադրվող միջոցների միակ ազատ պահանջմաններից հանդիսանում եյին իր ապրանքները, վորոնք գնահատվում եյին 3.600.000 ռուբլի վոսկով: ըստ վորում այդ ապրանքների նշանակալից մասը կազմում եյին դժվար վաճառվող բոլոր տեսակ ապրանքների մնացորդները: Սկսվեց միջոցների գանձման աշխատանքը, առ 1-ն հունվարի 1922 թվի Ցենտրոսոյուղի ամբողջ գըրամագլուխը հաշվվում եր մոտ 8 միլիոն ռուբլի և դեռ այդ գումարի նշանավոր մասն ել գոտնվում եր ուրիշ կազմակերպությունների հետ ունեցած վիճելի հաշիվների մեջ, անշարժ կայքում և այլ վոչ առեւտրական արժեքներում: Պետք ե նկատել, վոր այն ժամանակ ստեղծված առեւտրական այլ հիմնարկներ պետությունից միջոցներ եյին ստանում ավելի խոշոր չափերով: Ժողովրդական Տնտեսության Բարձրագույն Խորհրդի կենտրոնական առբաժինն սկզբնական գործառքների համար ստացավ 20.000.0000 ռուբլի վոսկով, «Խլեբովորովուկտ» ակցիոներական ընկերությունը՝ 40.000.000 ռուբլի վոսկով և այլն:

Սպառողական կոռպերացիան աշխատում եր շատ ծանր պայմաններում: Շատ վատ եյին և այն ապրանքների տեսակները, վոր սպառողական կոռպերացիան ստացավ պետական որդանների հետ կնքած իր առաջին յերկու խոշոր պայմանա-

զրերով — Պարժողկոմատի հետ՝ հայր պատրաստումների առթիվ (1921—1922 թ.) և Գլխավորականտխորհի հետ՝ այսպես կոչված՝ տասըմիլիոնյան վարկի համար (1922 թ.):

Բոլոր այդ ծանր պայմաններում սպառկոռպերացիան ըստ վատնեց իր արժեքները, ինչպես այդ արին պհտական որգաններից շատերը, այլ կարողացավ պահպանել ու մեծացնել այն: Առ 1-ն հունվարի 1923 թվին գուբառոյուղների (սպառկոռպերատիվների) միջին դրամագլուխը, կայքով ու ապրանքներով 30.000 գուկե ոռուրլու արժեքից պակաս եր. իսկ 1923 թվին սկզբներին այդ միջին դրամագլուխը մոտենում է 300.000 գուկե ոռուրլու, այսինքն՝ 2 տարում ավելացել և մոտավորապես 10 անգամ: Մենք արդեն տեսանք, վոր Ցենտրոսոյւղն ել այդ ժամանակամիջոցում նշանափոր չափով ավելացրեց իր դրամագլուխները:

Ճիշտ և, այստեղ ոգնության հասավ այն հանգամանքը, վոր սպառողական կոռպերացիային վերադարձվեց իր կայքը, վոր պետությունը նրանից վերցրել եր (ազգայնացրել եր) քաղաքացիական կովկի ժամանակ: Հենց միայն այդ հանգամանքը 1922 թվին Ցենտրոսոյւղի դրամագլուխներն ավելացրեց մի քանի միլիոն ոռուրլով: Խոշոր քանակությամբ արժեքներ վերադարձվեցին նաև միություններին, ինչպես և մի քանի ստորին կոռպերատիվների: Բայց և այնպես, առեւրական շրջանառության համար այդ վերադարձնելը անչափ քիչ միջոցներ եր տալիս, ընդհակառակը, հետ ստացված արդյունաբերական ձեռնարկներն ու անշարժ կայքը պահանջում եյին շրջանառության միջոցների անհապաղ ծախսումն՝ այդ ձեռնարկները կարգի բերելու և աշխատեցնելու համար:

Այդ պատճառով՝ սպառողական կոռպերացիայի ձեռք բերած սեփական միջոցների գլխավոր մասը — տնտեսական նոր քաղաքականության ժամանակ — այնուամենայնիվ կազմում եյին տնտեսական գործունեցրությունից ստացված ոգուտները: Յեկ հենց այդ արդյունքով միայն կարելի յե բացատրել կոռպերատիվ աշխատանքի լայն ծավալման այն հնարավորությունը, վոր ստացվել և ներկայում:

Նրանց, ովքեր կասկածում են, թե թույլատրելի յե տրնտեսական աշխատանքից ստացվող ոգուտի ոգտագործումը, բավական և ցույց տալ անգլիական կոռպերացիայի որինակը, Անգլիական կոռպերացիայի փայտարամագլուխը կազմում ե նրա

ամբողջ դըամագլիքի մեկ յերրորդը միայն: Հետևապես՝ մնացած յերկու յերրորդը գանձված և հենց անտեսական աշխատանքի կարգով:

Միենույն անգլիական որինակը մեզ պետք է ցույց տա, թե Ռուսական կոռպերացիան դեռևս վորքան բան ունի անելու սեփական միջոցների ստեղծման ճանապարհին և թե մեր կոռպերատիվ դրամագլուխները դեռևս ինչքան հեռու յեն այն միջոցներից, վոր ունի յերրոպական հին կոռպերացիան և հատկապես՝ անգլիականը:

Մեծաքանակ գնումներ կատրող յերկու ընկերությունների (անգլիական և շոտլանդական) դրամագլուխները 1914 թվին արդեն հասել եյին 130.000.000. ոռուրլու, իսկ 1920 թվին անցան 300.000.000 ոռուրլուց: Այս թվերը մեզ չպետք է հուսալքեն, այլ ավելի պիտի խրախուսեն մեր հետագա աշխատանքը. ըստ պետք է մոռանալ, վոր Ցենտրոսոյւղով զը գոյություն ունի 26 տարի, իսկ անգլիական մեծաքանակ գնումների ընկերությունների արդեն 60 տարուց ավելի: Նա բավական ժամանակ և ունեցել՝ այդպիսի խոշոր դրամագլուխ հավաքելու համար: Հետաքըրքական և, վոր յերբ բացվեց անգլիական մեծաքանակ գնումների ընկերությունն ու միացվեցին 651 կոռպերատիվներ, այդ միենույն տարին Ռուսաստանում ստեղծվեց Կինովի առաջին սպառողական բանվորական ընկերությունը:

Հիշե՛ր կոռպերատոր — ԾՐԱԳՐՎԱԾԾ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՍՏԱՐԻՌ ՍԵՓԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

Դերջում հիշատակենք կոռպերացիայի սեփական միջոցները կազմող և վոչ հաճախ հանդիպող, բայց և այնպես հնարավոր աղբյուրների մասին՝ զրանք տարբեր տեղերից ստացվող զանազան թոշակներն ու նվիրատվություններն են: Այսպիսիների մեջ ամենից առաջ պետք է հաշվել հին «տերերի» հատկացումները. ձեռնարկությունների տերերը կոռպերատիվներին, կազմակերպված բանվորներին ու ծառայողներին, իբր ոժանակություն, սկզբի շրջանում զործ կազմակերպելու համար, կամ իբր լրացրուցիչ ոժանդակություն, տալիս եյին վորոշ հատկացումները. Արտաքուստ դա միմիայն բարեգործություն եր, բայց

հաճախ այդ բարեկործության տակ թագսված եր բանվորների ու ծառայողների ստեղծած հիմնարկներն ավելի ուժեղ կերպով իրենց «ձեռքն առնելու» ցանկությունը: Նման զոհաբերություններ պատահում են նաև մեր ժամանակներում, յերբ վորեա տրեստ կամ ձեռնարկության տեր իր բանվորներին ու ծառայողներին ոժանդակում ե կոռպերատիվ ստեղծելու կամ այն ամրացնելու գործում: Իհարկե, այս ոժանդակությունն առաջվա զզվելի բնույթը չունի և այն կարելի յե ընդունել, բայց նման ոժանդակությունը կոռպերացիայի միջոցների համար հիմնական աղբյուր համարել չի կարել:

Հիշեք կոռպերատոր—ՍԵՓԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԴ ՍՏԵՂԾԻՐ ՎՈԶ ԹԵ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՄԲ, ԱՅԼ ԻՆՔՆԱԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅԱՄԲ ՈՒ ՏՆՏԵՍՈՒՄՈՎ:

ԳԼՈՒԽ II

ԿՈՌԵՐԱՏԻՎԻ ԱՆԴԱՄԻ ՄՈՒԾՈՒՄՆԵՐԸ

ՄՈՒՏՖԻ ՎՃԱՐ

Սպառողական ընկերության մեջ մտնող ամեն մի նոր անդամ կոռպերատիվի դրամագլխի համար պետք ե տա՝ այսպես կոչված՝ մուտֆի վճար: Այս վճարն անվերագարեա ե—վերածվում ե հասարակական անբաժանելի դրամագլխի ու մուծողին չի վերադարձվում—վոչ ընկերության անդամությունից կամագոր հեռանալիս և վոչ ել հեռացվելու դեպքում: Այսպիսով՝ մուտքի վճարներն ամբողջովին ծառայում են հասարակական գործին—կոռպերատիվի դրամագլուխ ստեղծելուն, այդ պատճառով կոռպերատիվ գործի համար շահավետ ե մուտքի վճարների չափն ավելացնելը: Բայց դրանով չքավոր քաղաքացիների համար դըմարանում ե կոռպերատիվի մեջ մտնելու հնարավորությունը—ուստի և հաճախ որենքով նախորոշվում ե մուտքի վճարի ամենաբարձր չափը: Պատերազմից առաջ ամենաբարձր չափը համարվում եր 3 սուբլի: իսկ այժմ, համաձայն 1924 թվի մայիս 20 դեկտեմբերի, մուտֆի վճարը չի կարելի եռանակել 50 կոպեկից ավելի: Ասենք, պատերազմից առաջ ել իրականում մի սուբլուց ավելի մուտքի վճարը հազվադեպ եր:

Հատկապես կարեոր ե, վոր մուտքի վճարի չափը փոքր լինի այն ընկերություններում, վորոնց անդամների կազմը հաճախ ե փոփոխվում, շնորհիվ տեղական պայմանների—որինակ՝ սեղոնային աշխատանքների վայրերում:

Հակառակ դեպքում մուտքի վճարի մեծությունը կիսանգարի, վոր կոռպերատիվի մեջ մտնեն այն քաղաքացիները, վորոնք այդ վայրում յերկար բնակվելում տաղբություն չունեն: Մյուս կողմից՝ մուտքի վճարը հատկապես կրծատելու կարիք չկա, վորովհետեւ ամեն մի նոր անդամի ընդունելությունը կապված ե արձանագրվելու

վորոշ ծախքերի հետ և այլն: Իսկ զործողութենքներով՝ կոռպերատիվի անդամ համարվելու համար՝ բավական ե կանխիկ կերպով մըտցնել մուտքի վեճարը, մասցած մուծումները կարելի յե անհետ հետզհետեւ—ժամկետներով: Պետք ե հիշել նույնպես, զոր մուտքի վճարի մեկ անգամ վորոշված չափը փոփոխվում ե վորոշ դժվարությամբ, վորովհետեւ այդ դեպքում պետք ե փոխել կանոնադրությունը, պետք ե նորից արձանագրվել և այլն:

Խորհուրդ կոռպերատորին.—ՄՈՒՏՔԻ ՎՐԱ-
ՃԱՐԻ ԶԱՐՔ ՊԵՏՔԻ ՎԱՐՈՇԵԼ ՊԱՐՏԱ-
ԴԻՐ ՓԱՅԱՎՃԱՐԻ ՄԵԿ ՏԱՍՆՈՐԴԱԿԱՆԻ
ԶԱՐՈՎ:

ՓԱՅԱՎՃԱՐՆԵՐԸ

Անդամի կատարած վճարումների հենց այս տեսակն է, զոր սպառողական ընկերության սեփական միջոցների գլխավոր աղբյուրն ե կազմում: Մուտքի վճարների հակառակ՝ ֆայերը մնում են իբր սեփականություն ֆայը մտցնող անգամի, վօրեն իրավունք ունի այդ դրամը հետաստանալու, յեթե ինքը վորեն պատճառով հեռանում կամ հեռացվում ե սպառողական ընկերության անդամությունից: Ճիշտ ե, դրա համար պետք ե սպասել մինչև այս ժամանակ, յերբ ընկերության անդամների ընդհանուր ժողովը հաստատի այն գործառքային տարվա հաշվետվությունը, վորի ընթացքում հեռացողը հայտարություն է տվել կամ՝ տեղի յե ունեցել հեռացնելու վորոշումը: Հաշվետվության հաստատումից հետո փայտավճարը պետք ե վերադարձվի ընկերության նիստին անդամին, կամ նրա մահվան դեպքում՝ նրա ժառանգներին:

Այսպիսով՝ կոռպերատիվին փայտավճարներ տալը, անկախ կոռպերացիայի գործին անսիջական ոգուտ բերելուց և անդամներին ապրանք մատակարարելուց, կարող ե միջոց հանդիսանալ՝ դրամներ խնայելու համար: Իսկ յեթե ընկերության գործառքներն ոգուտ են բերում, ապա փայտերն իրենց տիրոջը տալիս են նաև շահ, վոր փայտագրամազլիմի վրա ավելացվում ե վորպես տոկոս: Յերբեմն այդ բանը այնքան ձեռնուու ե լինում, վոր ստիպված են լինում փայտերի վորոշ քանակ սահմանել, վորպիսի քանակից ավելին ընկերության ամեն մի անդամը չի

կարող ունենալ: Համենայն դեպս, մեր որենքով արգելված ե ընկերության գործերը վարելու կամ ընկերության ծառայություններից ոգտվելու խնդրում վորեւ արտօնություն տալ նրանց, ովքեր ավելորդ փայեր ունեն:

Ասենք՝ այժմ մենք ավելի շատ մտահոգված ենք նրանով, զոր ընկերության բալոր անդամներին գրավենք զեղի մատչելի փայտավճարները լրիվ մուծելու և անդամների քանակն ավելացնեու ուղին:

Մայիսի 20-ի գեկրետով սպառողական ընկերությունների անդամի համար, իբր պարագիր ֆայտավճարի ամենաբարձր չափ նշանակված ե հինգ ուուրլի: Այդ գումարից ավելին իբր անդամի պարտադիր փայտավճար չի կարելի մտցնել կոռպերատիվի կանոնադրության մեջ: Պատերազմից առաջ սահմանված այդ համաստը եր 10 ուուրլու: Փայտավճարի ներկա չափը սահմանված ե այն նպատակով, վորպեսզի չքավոր բնակչությունն սպառողական կոռպերացիային անդամագրվելու հնարավորություն ունենալ:

Պետք ե խստավանել, զոր իմպերիալիստական պատերազմի և այլ արհավիրքների ազդեցությունից հետո ՍԽՀՄ-ի բնակչության մեծ մասն իսկապես զոր դժվարությամբ կարող ե դրամ հավաքել անդամավճարների համար: Փորձը ցույց ե տալիս, զոր մինչև 5 ուուրլի իջեցված փայտավճարն իսկ զանձվում ե մեծ դժվարությամբ և քիչ տեղերում միայն այդ տեսակետից մենք բավարար հաջողություններ ենք ունեցել: Գործն ավելի լավ ե դրված բանվորական ու քաղաքային կոռպերացիայում, վորտեղ բնակչությունը դրամական ավելի մեծ միջոցներ ունի, քան զյուղական ընակիւը:

Փ 13ԵՐԻ ԳԱՆՁՈՒՄԸ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՅԵՎ ԲԱՎՈՐԱԿԱՆ ԿՈՌՊԵՐԱՑԻՎՆԵՐՈՒՄ

Ինչպես արդեն ասվեց, քաղաքային և բանվորական բնակչությունը դրամական ավելի մեծ միջոցներ ունի, քան զյուղացին: Այդ իսկ պատճառով, քաղաքային ու բանվորական կոռպերատիվների համար նորմալ և համապատասխան պիտի համարել փայտավճարի այն առավելագույն չափը (5 ռ.), զոր գործված և մայիս 20-ի գեկրետով: Այդ չափից շեղումներ կարելի յե թույլատրել միմիայն բացառիկ դեպքերում:

Ամենից առաջ պետք ե հիշել, վոր փայավճարի վարով ած չուփն ինքնին չափազանց փոքր ե և բացատրվում ե որին ադրողի այն ցանկությամբ, թե ինչ գնով ել լինի՝ ընակչության լայն խավերին հնարավորություն պիտի տալ կոռպերատիվ աշխատանքի հունը մտնելու համար։ Սա մի հասկանալի ու բնական ցանկություն ե Խորհրդային իշխանության կողմից, վոր միշտ ել հաշվի յե առնում չքավոր բնակչության շահերը։ Բայց հենց այդ նույն պատճառով օ ոուրլի անդամավճարը պետք ե համարել այնպիսի գումար, վոր անհրաժեշտ ե բոլոր ուժերով իրականացնել կյանքում՝ կոռպերատիվների աշխատանքն ապահովելու համար։ Յեվ իրոք՝ գեռ պատերազմից առաջ, տասը ոուրլի փայավճարը համարվում եր այնպիսի մի գումար, վորով հազիվ թե կարելի լիներ բավարարել անդամների կարիքները և այն ժամանակվա 10 ոուրլին՝ գնելիք ապրանքների ու մթերքների արժեքի տեսակետից՝ կարելի յե հավասարեցնել ներկայիս մոտ 20 ոուրլուն։ Պարզ ե, վոր մեծացել ե նաև սպառկոռպերացիայի շրջանառության միջոցների պահանջը։

Կոռպերատորի պարտականությունը։—
ԶԳՏԻՌ ՔՈ ԿՈՂՊԵՐԱԾԻՎԻ ՊԱՐՏԱ-
ԴԻՐ ՓԱՅԱՎՃԱՐԸ ՀԱՍՑՆԵԼ ԱՄԵՆԱ-
ԲԱՐՁՐ ԶԱՓԻՆ — 5 ՈՒԻՔԼՈՒՆ։

Ինչպես ցույց տվեց Ցերաբսեկցիայի*), մեջ համախմբված բանվորական կոռպերատիվների փորձը, բանվոր կոռպերատորները բավական լավ հասկանում ու յուրացնում են այդ պարտականությունը։ 1924 թվի աշնանը 127 բանվորական կոռպերատիվ կազմակերպություններն իրենց անդամների փայավճարները գանձել եյին հետեւյալ չարփով։

1—ական ոուրլի	2 կազմակերպություններ
2— » » 13	» »
3— » » 20	» »
4— » » 1	» »
5— » » 86	» »

Ցերաբսեկցիան բանվորական կոռպերացիայի համամիութենական կենտրոնն ե, վոր կից ե Ցենտրուսոյությին—«Կենտրալայա սեկցիա ռաբություն»։

Նշանակում ե՝ բանվորական կոռպերատիվների յերկու յերրորդը գանձել ե 5-ական ոուրլի։

Մինչեռ, 1924 թվի սկզբներին փոքրամասնություն եյին կազմում 5-ական ոուրլի անդամավճար ունեցող կազմակերպությունները։ Պետք ե հուսալ վոր մոտ ժամանակներում արդեն բացառություն կլինեն 5 ոուրլուց պակաս պարտադիր փայավճար ունեցող բանվորական կոռպերատիվները։ Ինքնին հասկանալի յե, վոր բանվորների համար մատչելի փայավճարների չափը ավելի հեշտ կարելի յե անցկացնել բաղաբանին կոռպերատիվներում, վորոնք ընդհանուր առմամբ միացնում են ավելի ուներ քաղաքացիների, քան բանվորական մասսան եւ Դեռ պատերազմից առաջ հաճախ հարկ եր լինում քաղաքային ընկերություններին ավելի սահմանու, քան առաջ քշելու փայավճարների գանձման տեսակետից։

Բայց անդամավճարների չափ առհմանելը բավական չե— գլխավոր դժվարությունն այն ե, վոր ընկերության անդամներից այդ անդամավճարները գանձվեն և մտնեն ընկերության դրամարկղը։ Ճիշտն ասած՝ նման դեպքում չի իմացվում, թե ինչն ե ավելի դժվար—արդեն լեզած անդամներից լրացուցիչ փայեր գանձելը, թե՞ նոր անդամներ գրավելը։

Եատ գեպքերում ամենաարագ ու անվաս միջոցն այն ե, վոր համաձայնություն կայացվի այն ձեռնարկության կամ հիմարկության հետ, վորտեղ աշխատում են կորպերատիվի անդամները։

Այդպիսի համաձայնությամբ ձեռնարկության վարչությունը միանգամից կոռպերատիվի գանձարկղն ե մտցնում կոռպերատիվների անդամ հանդիսացող իր բանվորների կամ ծառայողների կողմից կոռպերատիվ մուծելիք ամբողջ փայավճարը, իսկ հետո հետզհետեւ դուրս ե զալիս նրանց աշխատավարձից։ Հասկանալի յե, վոր նման գործողության համար նախապես ստացվում ե բանվորական ժողովի կամ, համենայն դեպս, ամեն մի առանձին անդամի համաձայնությունը։

Առաջներում անդամավճարների այս ձեի գանձման դեմ բազմաթիվ վեճեր ու առարկություններ եյին լինում։ Առարկություններից գլխավորն այն վախն եր, վոր այդ ձեով կոռպերատիվին կանդամագրվեն վոչ բավականաչափ գիտակից և կոռպերատիվ գործի նշանակությունը լավ չըմբռնող մարդիկ։

«Զոկ բան ե, յերբ վոգերության տեսակետում, ընկերներիդ

ազգեցության ներքո ստորագրում ես, վոր գրասենյակը աշխատավարձիցդ փայ հատկացնի և ջոկ բան ե, յերբ միանգամից կամ մաս-մաս այդ վճարումները կատարում ես քո գրպանից»: Այսպես ե գրում հին կոռպերատորներից մեկը: Ինարկե, այս նկատառումը դեռ այսոր ել չի կորցրել իր փորոշ նշանակությունը, սակայն նրա ուրյժը, այնուամենայնիվ, պակասել ե: Հեղափոխությունն այնքան զիտակցություն ե տվել բանվորությանն ու ընդհանրապես աշխատավորներին, վոր այժմ արգեն ավելորդ ե գառնում առաջվա «անգիտակցության» մասին խոսելը: Բայց մի ուրիշ յեզրակացություն կարելի յե հանել, այդպիսի միջոցը պետք ե գործադրել վոչ թե «վոգենորության տեսնում»: այլ լրջորեն պետք ե բացատրել անդումագրվելու այդ ձևի շահավետությունն ու անշահավետությունը՝ մատնանշելով վճարումի ճիշտ չափը և այլն: Այդ ժամանակ անշահավետ կողմից միշտ ել անուշաղրության կմատնվեն և կմնամիմիայն ողուարը:

Իսկ ոգուտ ստանում են բոլոր նրանք, ովքեր մասնակցում են այդ գործին՝ թե կոռպերատիվը, թե բանվորը և թե ձեռնարկությունը. Կոռպերատիվը կավելացնի իր զրամապլուխը, բանվորն այդ նոր միջոցները կոգտագործի ավելի լավ ապրանքներ ստանալու համար, իսկ հիմնարկությունը կամ ձեռնարկությունը կշահեն նրանով, վոր բանվորներին տված աշխատավարձով հընարավոր կլինի ձեռք բերել ավելի արժան ապրանքներ ու մթերքներ:

Մի տեսակետից միայն, պետք է խոստովանել, վոր վերը
առաջ բերած միտքը ճշմարիտ եւ Վորպեսպի կոռպերատիվի ան-
դամը միանգամայն գիտակից կոռպերատոր դառնա, վոչ միայն
նրան պետք է ձեականորեն անդամագրել կոռպերատիվին, այլ
և պետք է ստեղծել բարոյական ու նյութական այնպիսի խթան-
ներ, վորոնք կարող են ամրապնդել՝ դեպի կոռպերատիվը յե-
ղած հետաքրքրությունը, թե ըստ մարդու բնական հատկու-
թյան և թե ըստ ներկա կյանքի պայմանների, այդ տեսակետից
առաջին տեղը գրավում են այն նյութական բարիքները, վո-
րոնցով կոռպերատիվը իր անդամներին կարողանում է զանա-
գանել ուրիշ գնորդներից։ Հասկանալի յե, վոր այդ բանը հատ-
կապիս կարեսը և այն դեպքերում, յերբ կոռպերատիվի գործու-
նելություն իր անդամներից ավելի լայն ցըան և ընդգրկում:
Նման դեպքերում, կոռպերատիվի նոր անդամներ գրավելու նր-

պատակով ոգտագործելու համար կարելի յէ հանձնաբարել մի շարք արտօնություններ, վորոնցով ոգտվում են կոռպերատիվի իրավատել անդամները:

ԱՆԴԱՄՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այդ արտօնությունները կարող են տարբեր ձևեր ընդունել: Ամենից առաջ անհրաժեշտ և անդամների մուծած փայտագնարների վրա գալ գրամագլխի ոգեազուրման վորուսկուս: Այդ տոկոսը սովորաբար վճարվում է ոգութիւց, վոր պարզվում և անտեսական տարբաքան ընթացքում՝ կոռպերատիվի կատարած գործառների արդյունքից:

Կոռպերատիվի անդամներին շահագրգուելու մի ուրիշ ձևն ել՝
վաճառքի գեներից արվող զեղչն ե, վոր կոռպերատիվի անդամ-
ներն ստանում են, իսկ մյուս գնորդները՝ վոյ. Այս արտօնու-
թյան նշանակությունն այն է, վոր կոռպերատիվի անդամն առ-
հասարակ ամեն մի գնումը կատարելու ժամանակ զգում է կոռպե-
րատիվ աշխատանքի ոգաակար դերը և հենց զրանով առորյայում
վարժվում է կոռպերատիվում ունեցած իր մասնակցությունը գնա-
հատելուն: Հասկանալի յե, վոր այդ արվող զեղչելու սովորաբար
մեծ լինել չեն կարող, վորովհետև նրանք արվում են շուկայի
գների մրցման հետևանքով ստեղծված նորմալ գներից: Բայց
և այնպես, արտօնությունների այս տեսակը ամենակոռպերատիվը
պիտի ճանաչել, —կոռպերացիայի ժամանակակից խնդիրներին հա-
մապատասխան լինելու տեսակիտից—քանի վոր կոռպերացիան
մշտական մրցման մեջ և գտնվում մասնավոր կապիտալի հետ և
այդ մրցմանը կարող և դիմանալ համարյա բացառապես՝
շուկայի գներն իջեցնելու քաղաքականությամբ:

Նյութական արտոնության յիշը սրբ հնարավոր տեսակը — գնումների համար տրվող պրեմիան ե, վոր յուրաքանչյուր անդամի վճարվում ե նրա կատարած գնումների համեմատ և տարածվում ե կամ բոլոր ապրանքների վրա, կամ՝ թե՛ ապրանքի վորոշ տեսակների վրա։ Այդ պրեմիային կարելի յի տալ զանազան բնույթ, ավելի՝ կոռպերատիվ բնույթ, յերբ պրեմիայի նպատակն ե կոռպերատիվի անդամներին գրավել ու մասնակից դարձնել կոռպերատիվի ամենորյա մասսայական աշխատանքներին, և առեւրական բնույթ, յերբ պրեմիան տրվում ե վորոշ տեսակ ապրանքների՝ այդ ապրանքների սպառմանն ու արագ

վաճառքին նպաստելու համար: Այս յերկրորդ գեղքում հեշտությամբ կարելի յե չափազանցության մեջ ընկնել և խախտել կոռպերատիվ սկզբունքները: Բավական և մատնանշել այն հեռանկարները, վորոնք այդ տեսակետից—թե ներկայումս և թե անցյալում—կապված են գինու և շնայլության այլ առարկաների վաճառքի հետ: Այդպիսի գեղքերում, ընկնելով պրեմիայի հետեւց, կոռպերատիվի անդամը հեշտությամբ կարող է կոռպերատիվի ու կողմանակի գնորդի միջև միջնորդ դասնալ և տարածել այնպիսի ապրանքներ, վորոնք դժվար թե համապատասխան լինեն կոռպերատիվ զաղափարներին: Անմիջական շահ ձեռք բերելու տեսակետից՝ նյութական արտօնության այս ձեռք միջին տեղն և ըստում տոկոսի և զեղջի միջև: Իսկապես վոր՝ պրեմիա ստանալու համար չպետք ե սպասել մինչեւ տնտեսական տարվա վերջը և դրանով հետաձգել կոռպերատիվի շահավետ դերի հանդես բերելը, այլ ընդհակառակը՝ պրեմիաների վճարումը կարելի յե կատարել այն ժամանակամիջոցում, վորն ամենից նպատակահարժարը կհամարվի:

Իսկ յեթե նյութական արտօնության վերոհիշյալ յերեք տեսակները գնահատելու լինենք անդամներին անմիջապես գրավելու տեսակետից, նկատի ունենանք նրանց գեմոկրատական լինելը, ապա պետք ե խոստովանենք, վոր, ի հարկե, այդ յերկու սկզբունքներն ամենից ավելի իբրար մոտեցնող հանդիսանում են զեղջերը: Յեվիրոք, փայտգրամագլիքի վրա տոկոսներ գալը կոռպերատիվի անդամի համար միմիայն մշտական խնայողության նըշշանակություն ունի, և այդ տոկոսային հավելումները շատ հաճախ չեն տրվում անդամներին, այլ ավելացվում են նրանց մացրած փայտգրամագլիքին: Նշանակում ե՝ տոկոսային այդ հավելումները ստանալու համար անհրաժեշտ և կոռպերատիվից դուրս գալ իսկ դրամը ձեռք բերելու համար դեռ պետք ե սպասել այնքան ժամանակ, ինչքան կանոնադրությամբ նախատեսված և անդամների փայտգրամարձները վերադարձնելու համար: Ներկայիս գործող նորմալ կանոնադրության համաձայն, այդ վերադարձնելը կատարվում ե այն տնտեսական տարվա հաշվետվությունը հաստատելուց յերեք ամիս հետո, վոր տարվա ընթացքում անդամը կոռպերատիվից հեռանում է: Այս պայմաններում յերկար ժամանակ հետաձգվում ե փայտգրամարի ոգումն ստանալու հնարավորությունը և կորչում և անմիջական շահավերգությունը դեպի այդ գործը: Բայց վրա փոխարեն, այդ ձեռնոցը կոռպերատիվի անդամներին կարձատել ու յերկարատել վարկ տալն ե: Վարկի այդ յերկու տեսակները ներկայումս բավական լայն ծավալ են:

յե պաշտպանում կոռպերատիվի շահերը, վորովհետև ստացված ոգումը մնում է կոռպերատիվի շրջանառության մեջ, համենայն դեպս, մինչեւ այդ ոգումի բաշխումը, իսկ տոկոսները փայտամագլիքի վրա գտնու գեղքում՝ ավելի յերկար ժամանակով, ինչ վերաբերում է գնումների պրեմիային, ապա վերջինս պայմանագործած և վոչ միայն կոռպերատիվի անդամի փոքը կամ մեծ շահավերգությամբ զեղի կոռպերատիվի գործը, այլ և այն նյութական միջոցներով, վոր կոռպերատիվի անդամը ծախսում է ապրանքներ գնելու համար: Հասկանալի յե, վոր այդ պրեմիան խոշոր կախման մեջ ե կոռպերատիվի տվյալ անդամի բարեկեցությունից: Բանի վոր պրեմիաների վճարումը տեղի յե ունենում վորոշ ժամանակաշրջանում ու միանդամից, ապա մեծ քառակությամբ և փոքը քանակությամբ գնումներ կատարող անդամների միջև տարբերությունը խոշոր կլինի և անդամների միջև անխուսափելիորեն կտեղծվի շերտավորում: Բացի, այդ, ինչպես արդեն ասացինք, նման պրեմիան տրվում է ի հաշիվ այն տարբերության, վոր կա կոռպերատիվ վաճառքի ու շուկայի գների միջև և հենց զրանով ել չափազանց գժվարանում և մասնագոր շուկայի զեմ տարվող մրցումը: Այդ բոլոր նկատառուժներով, անհրաժեշտ և խորհուրդ տալ կոռպերատիվներին—և հատկապես անդամների նկատմամբ իրենց զրությունը դեռ եռ չամրապնդած կոռպերատիվներին—վոր անդամներ գրավելու համար ամենից առաջ ընտրեն անմիջական զեղջերի ուղին: Նման զեղջում, ինչպես մենք արդեն ասացինք, անդամներն անմիջապես իրացնում են կոռպերացիայի ընձեռած արտօնությունները և հենց զրանով ավելի յե շեշտվում կոռպերատիվի ու նրա մրցակիցների տարբերությունը:

ԿՈՂՊԵՐԱՏԻՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բացի վերոհիշյալ նյութական արտօնություններից, կոռպերատիվի անդամներին ուրիշներից ավելի նախապատվություն տալու մի այլ հնարավորություն ել կա, վոր անպայման զգալի միջոց և հանդիսանու ու հատկապես արժեքավոր ե թույլ կատողության տեր անդամների համար: Այդ միջոցը կոռպերատիվի անդամներին կարձատել ու յերկարատել վարկ տալն ե: Վարկի այդ յերկու տեսակները ներկայումս բավական լայն ծավալ են:

ստացել քաղաքային ու բանվորական կռոպերատիվներում:

Ամենից ավելի հեշտ և բանվորների ու ծառայողների համար այսպես կոչված մանր-կրպակային սպառողական վարկ կազմակերպել այն ձեռնարկություններում, վորոնք այդ վարկային գործառների մեջ շահագրգուված են իրենց ու բանվորների փոխարքերության տկանեատից, վերջերս վարկի այդ տեսակը լայն գործարքություն և ստացել հատկապես այն տիպի բանվորական կոռպերացիայում, վոր համախմբված և Ցերաբսեկցիայի մեջ Հնում մանր-կրպակային վարկը կասկածներ եր ասածացնում այն տեսակեատից, վոր կոռպերացիան ստիպված եր իր միջոցները ծախսել մանր վարկային շրջանառության վրա և դրանով զրկում եր իշ գործունեյությունը զարգացնելու հնարավորությունից: Այդ առարկությունն իր ույժի մեջ և մնում նաև ներկայում հատկապես այն դեպքերում, յերբ ձեռնարկություններն իրենց հաշիվները ժամանակին չեն մաքրում կոռպերատիվի հետ՝ բանվորների համար կոռպերատիվից, ի հաշիվ ձեռնարկության, վարկային ոժանդակություն ստանալիս: Այնուամենայնիվ, այդ սխալ դեպքերը չպետք է յելակեա դարձնել գործի նորմալ դրության ժամանակ, յերբ ձեռնարկությունը կոռպերատիվին վորոշ միջոցներ և տալիս իրր ավանու, կամ գոնե ժամանակին բանվոր ու ծառայող անդամների աշխատավարձից վճարում և նրանց պարտքը—այդպիսի պայմաններում վարկի այս ձեր կիրառման դեմ արգելքներ չեն կարող լինել:

Մինչդեռ՝ այդ արտօնությունը կոռպերատիվի չունեոր անդամի համար նշանակալից շահ և: Բավական և հիշել, վոր հին ժամանակ մասնավոր առևտրականները հենց այդ ժամանական եյին իրենց հետ կապում և մինչև իսկ շահագործում՝ իրենց հաճախորդ բանվորներին ու ծառայողներին—զնորդական (զանորհայ) գրքույներով ապառիկ ապրանք բաց թողնելով: Կոռպերատիվի անդամի համար ամենից շահագրգիռը լերկարտեվ վարկ ստանալու և, վորով նա կարող է ձեռք բերել տան հիմնական կահույք կամ լայն սպառման այնպեսի առարկաներ, վորպիսին իր աշխատավարձով միանգամից գնել չեր կարող: Այս ձեր վարկին ավելի բարդ և, քան կարձատեմանր կրպակային վարկը: Նա պահանջում է բարդ պայմանագիր և յերաշխավորություն այն ձեռնարկության կողմից, վորտեղ տվյալ բանվորն ու ծառայողն աշխատում են: Սակայն զործը կանոնավոր գնելու դեպքում կարելի յե ոգտագործել և այս տիպի վարկավորումը: Այս յերկու

գործառքների կիրառումը և վայագնար մուծելու դեպքում կոռպերատիվի անդամին այդ իրավունքներից ոգտիլու հնարավորություն վերապահնելը՝ միշտ ել ամենալավ զրդիչը կհանդիսանան կոռպերատիվին անդամագրվելու համար:

Վերջապես, չի կարելի աչքաթող անել և մի ուրիշ միջոց, վորով կոռպերատիվի անդամներին կարելի յե առանձնացնել կոռպերատիվի ծառայությամբ ոգտվող ընդհանուր սպառող մասսայից: Այդ միջոցը—անմիջական ծառայությունների ընթացքում կոռպերատիվի անդամներին, ուրիշների համեմատությամբ, հարմարությունների տեսակեատից վորոշ արտօնություն տան և: Գործարքում են զանազան ձեւեր, անդամներին ապրանքը վաճառում և հերթից գուրս, սահմանափակ քանակությամբ յեղած աղբանքները զլիսավորապես անդամներին են վաճառվում, անդամներին բավարարելու համար նշանակում են հատուկ, նրանց ավելի հարմար ժամեր, իրավունք և տրվում ապրանք պատվիրել և առանց փոխագրական ծախքի՝ ապրանքը տանը ստանալ, կոռպերատիվին կից կազմակերպվում են զանազան ոժանդակիչ ձեռնարկներ և այլն:

Հիշե՛ր կոռպերատոր.—ԿՈՐՊԵՐԱՏԻՎՆ ԻՐ ԱՆԴԱՄԻ ՄԱՆՐ ԿԱՐԻՔՆԵՐՆ ԻՆՉՔԱՆ ՇԱՏ ՀՐԳԱ, ԱՅՆՔԱՆ ԱՎԵԼԻ ՄԵԾ ԾԱՌԱՅՈՒՅՈՒՆ ՄԱՏՈՒՅԱԾ ԿԼԻՆԻ

Անդամներ գրավելու այս միջոցը կոռպերատիվ տեսակեատից չի կարող հանդիպել վորեւ առարկության: Ամենակասկածելին կարելի յե համարել անդամներին հերթից գուրս ապրանք վաճառելը, վորովհետեւ կողմնակի գնորդի համար զրանով կարող են ստեղծվել խոշոր անհարմարություններ և խանութում կառաջանա այնպիսի անցանկալի մթնոլորտ, վոր քիչ կնպաստի կոռպերատիվի գործունյության լավ համբավին: Այդ տեսակեատից ավելի նպատակահարմար է կոռպերատիվի անդամների համար հատուկ ժամեր նշանակելը կամ անդամների համար բաշխման հատուկ կետեր բացելը: Խոկ ընդհանրապես, պետք է հիշել, վոր կոռպերատիվի անդամի շահերի նկատմամբ յեղած ուշագրությունն այնքան ավելի կընահատավի, վորքան նա ավելի հաշվի կառնի լայն մասսաների հիմնական շահերը:

ԱԳԻՏԱՑԻՌՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

ինչքան ել մեծ լինեն կոռպերատիվի անդամին տրվող նյութական առավելություններն, այդ առավելությունները նշեն ու կյանքում անց կացնելը բավական չեւ, առհասարակ մասսայական կազմակերպությունների հատկությունն այնպես եւ-իսկ կոռպերատիվն ել մասսայական կազմակերպություն եւ-վոր հաջողության հասնել կարելի յեւ միայն այն դեպքում, յերբ տեսեսական լավ աշխատանքին միանում են հատուկ, վոչ առեվտրական մեթոդներ։ Խանութում կարգը կարող եւ լավ լինել, կոռպերատիվի անդամները կարող են բավարարվել լավ, բայց քանի դեռ այդ առավելությունների մասին լայն կերպով հայտին չեւ-կազմակերպության շատ լավ ծառայություններից կոդտվին միմիայն քչերը։

Հիշե՛ր կոռպերատոր... ԱԳԻՏԱՑԻԱՆ ԿՈՂ-
ՊԵՐԱՑԻԱՅԻ ԱՄԵՆԱԼԱզ ԲԱՐԵԿԱՄՄԵՐԻՑ
Մեկն եւ

Այս միտքը պետք է յուրացնեն կոռպերատիվ գործիչները: Ազգեցության այս ձերին հաճախ վերաբերվում են արհամարհանքով, հատկապես անտեսավարները, զորոնք չեն հավատում խոսքի ուժին և վարժվել են ամեն ինչ գործով կառուցելուն: Միանգամայն ճիշտ ե, ի հարկե, զոր խոսքն առանց գործով ամրապնդելու՝ անհող ու անջուր ե: Բայց միուս կողմից, գործն ել առանց խոսքով ի հայտ բերելու կմնա անհայտության մեջ և հարկավոր արդյունքը չի տա:

Ապ, ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ, ՅԵԿ ԱՅԴ ՏՆՏ-
ԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԱՐԱԾՎՈՂ ՃԻՇՏ
ՏԵՂԵԿԱԾՎՈՂԻԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՉԱՎԳԵԼԸ
ԿՈՂՊԵՐԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾՐԱԳՐԱԿԱՓ
ԿԱՌՈՒՑՄԱՆ ԽՆԴԻՐՆ Ե:

Ագիտացիան կարելի յէ և պետք ե անցկացնել ամենալազմազան ձեռնութիւնը, վորոնց համար քաղաքներում և բանվորական կենտրոններում կան շատ հնարավորություններ։ Այս գործում

կոռպերացիային բացառիկ ոժանդակություն կարող է ցույց
տալ տպագրական խոսքը։ Գրքերը, ըրոշյուրներն ու թերթերը
կոռպերացիայի ամենահավատարիմ դաշնակիցներն են հանդիսա-
նում։ Դեռև ևս հին ժողովրդասեր պրոֆեսոր Չուպրովն եր ասում,
վոր Կոռպերացիան ամենից ավելի ուժեղ և այնտեղ, վոր-
աեղ ժողովուրդը զիրք է սիրում։

Այդ տեսակետը, վորպես ճշմարտություն, մնում է մինչև այսոր՝
կոռպերատիվ գաղափարների տարածման, կոռպերատիվի նոր
անդամներ, ինչպես և կոռպերատիվի նոր միջոցներ գրավելու
գործում կոռպերատորի մի այլ ուժեղ գաշնակիցն են հանդի-
սանում պրոֆմիությունական կազմակերպությունները։ ՍևՀՄ-ի
սահմաններում նրանց ույժն այնքան մեծ ու հանրածանոթ է,
վոր գժվար թե կարիք լինի նրանց վրա կանգ առնելու։

Կոռպերատորի կանոնը.—ՍԵՐՏ ԳՈՐԾԱԿ-
ՑՈՒԹՅՈՒՆ ՊՐՈՖԵՍՍԻՈՆԱԼ ԲԶԻՉՆԵՐԻ
ՀԵՏ:

Այս ե բանիվորական միջավայրում աշխատող կոռպերատորի առաջին կանոնը,

Պրոֆեսսիոնալ բջիջներն իրենց անդամներին պետք է կոչ անեն կոռպերատիվի մեջ մտնելու համար. նրանք պետք են ոգ-նեն ու ազիտացիա մղեն անդամավճարների ավելացման գործում, նրանք պետք են անպարտաձանաշներին կարգի հրավիրեն՝ իրենց կոռպերատիվ պարտքը կատարելու համար. Վերջապես՝ պետք են հիշել նաև կուսակցական կազմակերպությունները վորոնք նշանակալից գեր են խաղում: Կոմունիստական կուսակցության ղեկավար Բոլոր որդանների ամբողջ գիծն ուղղված է ղեկի կոռպերատիվ շարժման աջակցումն ու զարգացումը: Վաղիմիլի Իլյիչ Լենինի ավանդները լավ են յուրացվել և կուսակցության ղեկավարության ասպարիգում նրան հաջորդողներն արդեն կիրառում են այդ ավանդները: Կոռպերատիվի համար նոր անդամներ ու միջոցներ գրավելու խնդրում կուսակցական կազմակերպությունների ոգնությունը միշտ ել ակտիվ գործոն կանոնադասանալ:

ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐԻ ՄՈՒՇՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

Բայց կա և գործի մի այլ կողմը, վոր կռոպելատորը հաշվի

պետք և առնի փայտավճարային կամպանիայի ժամանակը՝ Ինչպես կոռպերատիվի հին անդամների, նույնպես և նոր անդամագրվողների համար ամեն կերպ պետք և հեշտացնել իրենց պարտի կատարումը—դրա համար առաջին և ամենաիրական միջոցը, ի հարկե, փայտավճարները մաս-մաս ուժելու հսարավորությունն է։ Սպառողական ընկերությունների ներկայումս գործող նորմալ կանոնադրությամբ մաս-մաս ուժելուն վերաբերվող ժամկետը նախատեսված և և չի առաջացնում այն արգելքները, վոր կային հնում, յերբ իշխանություն ունեցողները չքավոր ընակչության համար դժվարացնում ենին կոռպերատիվ հունի մեջ մտնելու խնդիրը։ Այդ ժամկետը կարելի յե սահմանել զանազան ժամանակամիջոցներով, բայց ցանկալի յե, վոր բանվորական ու քաղաքային կոռպերատիվների համար մուծումների ժամկետները համաձայնեցվեն բանվորների ու ծառայողների ոռոճիկ ստանալու ժամանակի հետ, յերբ այդ ուժությունները կատարվում են սվելի թեթև ու նպատակահարմար կարգով։ Ինչպես վերելում արդեն ասվեց, շատ գեղքերում հենց ձեռնարկության, կամ ձեռնարկության վարչության համար ձեռնուու յե լինում բանվորներին ու ծառայողներին ընդառնություններու և նրանց փոխարեն կոռպերատիվին անդամությար տալը, ի հարկե, հետաքայում նրանց աշխատավարձից այդ գումարը դուրս գալու պայմանով։ Այս գրավիչ միջոցի գործադրման ժամանակ կոռպերատորները չպետք և տարվեն իրենց ներ շահերով և ըստ հսարավորին ավելի նպաստավոր ժամկետներ պիտի նշանակեն իրենց ընկերության ապագա անդամների համար՝ թեկուղ հենց ստանալիք գումարի վորոշ նվազեցման և ժամկետի յերկարացման դնով։ Հակառակ գեղքում կոռպերատիվը հենց առաջին որից ծանր բերենաման կընկնի բանվորների ուստի և նրանց համար դժվար կլինի այդ առաջին անշուրժության մեջ:

Կոռպերացիայի փայտամագլուխ մեծացման միջոցներից մեկն ել, միշտ յեղել ե, այդ նպատակով կոռպերատիվի ոգուաներն ոգտագործելը—ոգուաներն անդամագնարի վերածելը—բայց այդ ժաման մենք գետ ավելի մասրամատն կիսունք հետաքայում։

ԼՐԱՅՈՒԹԻՉ ՓԱՅԵՐ

Կետք և կանգ առնել նաև կոռպերատիվի անդամի լրացուցիչ փայտավճարի վրա, վոր պարտադիր փայտավճարից ավելի յե,

Ի հարկե, նման մուծումներ կարող են կատարել միայն այն անդամները, վորոնք վորոշ չափով բարվոք նյութական վիճակ ունեն։ Ինքնին հասկանալի յե, վոր նման մուծումներ կոռպերատիվի անտեսության զարգացման տեսակետից չափազանց ցանկալի յեն, վորովհետեւ մեծացնում են կոռպերատիվի հիմնական զրամագլուխը և ընդապարություն են տալիս գործառքներն ավելի զարգացնելու։ Անհատ անդամների կողմից չափազանց մեծ փայտավճար մտցնելու գետ միշտ ել գոյություն և ունեցել միայն մի առարկություն։ ընկերության գործերի նկատմամբ հարուստ անդամների չափազանց մեծ ազդեցություն ձեռք բերու վատանգը։ Առանձին անդամները խոշոր մուծումներ կատարելիս՝ ընկերության գործերի ընթացքի վրա ուժեղ ազդեցունթյուն ունենալու հնարավորություն են ստանում հենց թեկուղ այն գեղքում, յերբ սպառնում են՝ թե կոռպերատիվից զուրս կզան։ Այդ պատճառով ընկերությունների կանոնադրությունների մեջ հաճախ կետեր են մտցվում փայտավճարների այն քանակի մասին, վորից ավելին ընկերության անդամն ունենալ չի կարող։ Ա.Խ.Հ. Միության ներկա պայտամաներում նման վատանգների հիմք չկա, բայց, իդեալ՝ սպառնությունների մասին հրատարակված հիմնական գեկրուում հատուկ մատնանշում կա այդ մասին, վոր մի քանի փայեր ունեցող անդամը հատուկ իրավունքով կամ արտոնությամբ չի ոգտագում։ Այդ իսկ պատճառով կարիք չկա հատուկ միջոցներ ձեռք առնել փայտավճարների կուտակման դեմ, ներկայիս նորմալ կանոնադրություննը կուտակման վոչ մի սահման ել չի կանխորշում։ Այս պայմաններում լիակատար հիմք կա խրախուսելու առանձին անդամների բարի կամքը, վոր սրանք ուղնության հասնեն երենց կոռպերատիվին։

ՓԱՅԱՎԱՐԱՅԻՆ ԿԱՄՊԱՆԻԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՍՊԱՌԿՈՌ-ԵՐԱՏԻՎՈՒՄ

Բոլորին հայտնի յե, վոր սպառողական կոռպերացիայի աշխատանքն ընդհանրապես գյուղում ավելի դժվար և և ավելի պակաս հաջողություններ և ունենում, քան քաղաքում։ Այդ բացարկում և մի շարք պատճառներով, բայց հազիվ թե նրանցից ամենակարենր չպետք և համարել հենց գյուղական այն ընակիչների աղքատությունը, վորոնք ամենից ավելի յեն։ թերված գեպի կազմակերպութիւնն ավելի պատաղական կոռպերատիվ-

վի պաշտպանումը։ Ուսեսը գյուղացին շատ ավելի հաճախ կարող է գնալ քաղաք կամ հարևան մած գյուղը, վրատեղ պետք յեղած ապրանքները կարելի յե ձեռք բերել Զքափորի համար ընդհակառակն, հաճախ այդ ճանապարհները փակ են, կամ փոխադրական միջոց չունի, կամ գործից կտրվել չի կարողանում և այլն։ Մինչդեռ այդ չքափորներն ուժ չունեն, վորպեսզի պաշտպանեն ու վոտքի կանգնեցնեն սպառողական կոռպերատիվը, վոր նրանց պատագրելու յե մասնավոր առևտրականին յենթարկվելու ստրկական պայմաններից։

Գյուղական կոռպերատիվ աշխատանքի յերկրորդ մեծ գըժվարությունը գյուղացիների՝ դեպի կոռպերացիան ունեցած՝ անվատան կամ գառն հիսութափությամբ լի վերաբերմունքն ե, Վոմանք կորցրել են հիս կոռպերատիվը մուծած իրենց փայտվարները, վոմանց գրամիներն անարժեք են դարձել՝ դրամների անկման ժամանակաշրջանում, շատերին խրտնեցրել և վատ տարվող աշխատանքի հետևանքով կոռպերատիվ խանութում տիրող ապրանքային թանգությունն ու ապրանքների փատությունը, շատերն ել առնասարակ խուսափում են հասարակական աշխատանքից և գերազանցում են իրենց մասնավոր տնտեսական կյանքում պարփակվելու և այլն։ Այս բոլոր գժվարությունները հանրածանոթ են և հենց ամենամեծ պատվի արժանի յեն այն կոռպերատորները, վորոնք այդ արգելվածները կարողանում են հաղթահարել։

Իսկ հաղթահարել կարելի յե համարյա թե միշտ, պահանջվում է միմիայն վորոշ վարժություն ու ճիշտ մոտեցում, ըստ վորում, ի հարկե, բոլորովին տարբեր մոտեցում, քան բանվորական ու քաղաքային կոռպերացիայում։ Ասենք, մի կողմից՝ փայտվարներ գրավելու հաջողությունը գյուղում ել կախված են ույն պատճառներից, ինչ վոր քաղաքում, կոռպերատիվ աշխատանքի հենց հիմքում նրա անդամները պետք ե պարզողեն զգան այն առավելությունները, վոր իրենք ունեն կոռպերատիվի կողմակի հաճախորդ—գնորդների համեմատությամբ։ Գյուղում, քաղաքից ավելի ուժեղ կերպով, պետք ե ցուցադրել կոռպերատիվին մասնակցելուց ստացվող անվաշական, գործնական արդյունքները։ Յեթե քաղաքում դեռ կարելի յե տատանվել ու քննել այն հարցը, թե զրամական ինչ ձեի շահ պետք ե տալ կոռպերատիվի անդամին, — տարվա վերջում ոգուտից արվող տոկոսները փայի վրա գալով, ծախու գներից զեղջ անելով, թե գնումների

համար պրեմիա տալով— ապա գյուղում այդպիսի կասկածներ լինել չեն կարող. ծախու ընդհանուր գներից անդամներին զեղջ անելն ամենալավ միջոցն ե, վորով կարելի յե հաղթահարել գյուղի բնակչի անվատան վերաբերմունքը դեպի կոռպերացիան և կարելի յե պատասխանելնը ամենուրյա մեծ ու անհատնում կարքներին։ Կոռպերատիվի նկատմամբ վստահություն ամբապընդելու տեսակետից մասնավոր մրցակիցներին հաղթահարելով միայն կարելի յե անցնել հետաձգումներով վճարում կատարելուն— գնումների համար պրեմիա տալուն կամ փայտվարի վրա տոկոսներ ավելացնելուն։

Գյուղական կոռպերատիվներում, իհարկե, քաղաքից ավելի մեծ չափով, պետք ե կոռպերատիվի անդամի կարիքներն ըստ հնարավորին լրիվ կերպով բավարարել, և այդ կերպ անդամներին պետք ե առանձնացնել կողմակի սպառողների ընդհանուր մասսայից։ Գյուղում, իհարկե, գլխավոր ուշագրությունը պետք ե կենտրոնացնել կյանքի այլ կողմերի վրա։ Ինչքան ել վոր աշխատանքային ժամը գյուղացու համար թանգ լինի, այնուամենայնիվ շնորհիվ կենցաղային պայմանների, գյուղում ժամանակն ավելի պակաս արժեք ունի, քան քաղաքում, վորտեղ բանվորի ու ծառայողի ամեն մի բովեն հաշվի յե առնված, վորովհետև բովեներով և չափված ու ձեած քաղաքային կյանքի ամրող գասապերումը կարող ե ստանալ չափազանց անհարժեշտ վորոշ ապլանքներ։

Յեթե կոռպերատիվը տվյալ շրջանում արտադրվող հացի կամ այլ մթերքների սպառման համար ել միջնորդական աշխատանք և կատարում, ապա այդ զեպքում կոռպերատիվի ձեռքում միանգամից լինում են բազմաթիվ արտոնություններ, վոր նա կարող ե արամադրել անդամներին և զրանով նոր փայտվարներ գրավել։ Կանխագնարները ևս կարելի յե առաջին հերթին անդամներին տալ, մթերքների շատության դեպքում ել կարելի յե առաջին հերթին անդամների մթերքներն ընդունել և այլն։

Գյուղական կոռպերատորը շատ լավ պետք է հիշի, զոր նրա աշխատանքը աշկարա յե, և յեթե տնտեսավար ու հասարակական վերաբերմունքով կոռպերատիվը կարելի յե արագությամբ բարձրացնել, ապա նույնքան հեշտ և կոռպերատիվը կործանել անփույթ վերաբերմունքով:

Հիշի՞ր կոռպերատոր. — ԿՈՌՊԵՐԱ-
ՏԻՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԻՔ-
ՆԵՐԻ ԲԱՋԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՈԳԱ-
ՅՑՆՊԱՌ, ԻՆՉՊԵՍ ՔՈ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՄԱՅԻՆ
ԵՄ ՀՈԳՈՒՄ:

Փայտավճարներ գրավելու համար տարվելիք ագիտացիայի ձևերն, ի հարկե, գյուղում ավելի տարեկը են, քան քաղաքում:

Այստեղ ավելի մեծ նշանակություն ունի առանձին գյուղացիների վրա անձնական ազդեցություն գործելը: Կարերը վոչ այնքան բնակչությանը գործին տեղյակ դարձնեն և, ինչքան այն, վոր գյուղացիներին խորապես ու հաստատապես համոզեն, թե կոռպերատիվ կազմակերպությունն ոգտավետ ու անհրաժեշտ է: Գյուղական միջավայրում հեղինակություն վայելող մարդկանց հետ անհատապես զրուցելը, ինչպես նաև գյուղական ուսուցչի և գյուղի այլ աշխատողների ոգնության դիմելը շատ բան կարող են անել փայտավճարային կամպանիայի հաջողության համար:

ՓԱՅԱՎՃԱՐԸ ՄՈՒՄԵԼՈՒ ԴՅՈՒՐՈՒԹՅՈՒՆԵՐ

Գյուղական կոռպերատիվների անդամավճարների չափը կամ անդամավճարների մուծման կարգը հաստատելու խնդրում պետք է շատ ավելն զգույշ լինի: Ամենից առաջ գյուղում, բացառիկ դեպքերում միայն կարելի յե սկսել ամենաբարձր նորմայից՝ 5 ս. փայտավճարներից: Հատկապես անհրաժեշտ է առանձին ուշադրություն դարձնել անդամավճարների մուծման համար ծրագրված ժամկետներ մշակելու վրա: Ինչպես և քաղաքույթին կոռպերացիայում, վճարման ժամկետներ վորոշելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն մոմենտները, յերբ գյուղացու վճարունակությունը լավանում է: Գլխավորապես, ի հարկե, գյուղացին

վճարունակ է լինում աշնանը, յերբ վաճառքի յե համում իր հավաքած հացն ու այլ մթերքները:

Միանգամայն նպատակահարմար է այդ ժամանակն սպառագործել փայտավճարների մուծումը դյուրացնող մի ուրիշ միջոցի համար, պետք է թույլատրել վոր մուծումները կատարվեն վոչ թե զրամով, այլ զյուղատնտեսական մթերքներով, և այդ մթերքները պետք է ընդունել գոյություն ունեցող գներով: Եթե ման միջցը հատկապես հարմար է այն գեղքերում, յերբ կոռպերատիվները պահպան կործանել անութեացի և հում նյութերի պատրաստման գործառքներ և կատարում:

Զքափոր զյուղացիների անդամավճարները գանձելու համար կարելի յե և նպատակահարմար է տեղական զյուղական փոխողկոմների ոգնությունը դիմել: Այդ ոգնությունը կարելի յե ցույց տալ իրը անդամավճարների համար տրվող փոխառություն և յերեխն ել ուղղակի կարելի յե առևլ վորպես այդ կարիքին հատկացվող նպաստ: Իր ճառերից մեկում մեր՝ Համամիտութենական Քյոլիվան՝ ընկեր Կալինինը հենց այդպես ել բընորոշել և փոխողկոմների գերը: «Մինչև անգամ չքավորության համար կոռպերատիվ փայեր պետք է ձեռք բերի»:

ԳԼՈՒԽ III

ԿՈՌԵՐԱՏԻՎԻ ԳՈՐԾԱՌԵՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՈԳՈՒՏԸ

ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՌԵՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՈԳՈՒՏԸ

Ինքնին հասկանալի յեւ, վոր այս տեսակի գործառքները սպառողական կոռպերատիվի գործառքների հիմնական կորիզն են կազմում և հենց դրանով ել կոռպերատիվի շրջանառությունների ամենահաստատուն մասն են կազմում։ Յեթե կարելի յեւ խոսել կողպերատիվ ոգուտի մասին, — այդ խոսքի խոկական իմաստով, հասկանալով այն իբր կոռպերատիվ աշխատանքից ստացված ոգուտ, թե ըստ նրա եյտության, և թե ըստ նրա գաղափարական բովանդակության, ապա, իհարկե, առեւրական սպառողական աշխատանքն ամենից ավելի յեւ մոտենում այդ ըմբռնման։ Ոգուտ ստանալու հնարավորության և կարելի յեւ ասել, կոռպերատիվ տեսակետից ոգուտն որինչափ համարելու հարցը, զանազան ժամանակներում յենթարկվել և տարբեր պարզաբանումների։ Վուանք գտնում եյին, վոր կոռպերատիվի ստացած ոգուտն ընդհանրապես չի կարող համարվել ոգուտ այն իմաստով, ինչ իմաստով այդ հասկանում են մասնավոր կապիտալիստները. Նրանք ասում եյին, վոր կոռպերատիվի ոգուտը հասարակական սեփականություն և և այդ իսկ պատճառով այն «օգուտ» անվանել չի կարելի։ Ուրիշներն ընդհակառակն՝ վոչ մի տարբեթյուն չեյին դնում մասնավոր ձեռնարկի ու կոռպերատիվի ոգուտի միջև։ Մեզ զբաղեցնում ե վոչ թե այդ գաղափարական հարցը, այլ այն զործնական խնդիրը, թե կոռպերատիվ շարժման հաջողությունների տեսակետից վ՞րքան նպատականարմար ու թյուլատրելի յեւ ոգուտ ստանալն այնպիսի գործառքներից, ինչպիսին հանդիսանում եառեւրական-սպառողական աշխատանքը, վոր ծառայում ե իր

անդամների կարիքների բավարարմանը։ Այս պարզ հարցի պատասխանը նույնքան պարզ է, այդ ոգուտն անհրաժեշտ ու անխուսափելի յեւ ամբողջ կոռպերատիվ աշխատանքի շահերի տեսակետից։ Իրոք, զժվար թե հնարավոր լինի աշխատանքը դնել այնպիս, վոր գործառքից վհչ ոգուտ, վհչ վնաս ստացվի և ծախսի ու յեկամուտի գումարները նույնը լինեն. այդ բանը զժվար է, վորովհետև նման դեպքում վոչ մի ապահովագրում, վոչ մի ապահովում չկա այն հնարավոր դեպքերից, յերբ՝ կոռպերատիվի վարչության ամենալավ մտադրություններին հակառակ, այնուամենայնիվ այս կամ այն գործառքը վնաս և բերում։ Անա թե ինչու միանգամայն անհրաժեշտ ու որինական և ապահովագրումն վորոշ տոկոսը, վոր արտահայտվում և հենց թեկուզ անդամների կարիքի բավարարման համար վաճառվող ապրանքների վրա արված վորոշ հավելումով։

Հիշե՛ր կոռպերատոր. — ՈԳՈՒՏԸ ԿՈՈՊԵՐԱՏՈՐ. — ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿ ՄԻ ԴԱՐՁՆԻՐ, ԲԱ.ՑՑ ՈԳՏԱԳՈՐԾԻՐ ԱՅՆ ՎՈՐՊԵՍ ՄԻՋՈՅՑ:

Վոչ մի դեպքում չի կարելի անդամների գրկանք ու ձնշում տեսնել նրանում, վոր կոռպերատիվը վորոշ չափավոր ոգուտ և ստանում։ Ստացված ոգուտը ամենից առաջ դառնում և հենց նույն անդամների սեփականություն, վորոնց բավարարման համար կատարվող գործառքներից այդ ոգուտը ստացվել եւ Մաքուր ոգուտ համարվող ամեն մի կոպեկը հետագայում գործադրվում և այնպիսի նպատակով, վորով շահագրգոված և անդամներից ամեն մեկը, կամ նրանք բոլորը միասին՝ հանձինս իրենց ստեղծած կոռպերատիվի հիմնարկության։ Ոգուտի այն մասը, վոր անմիջապես չի մտնում կոռպերատիվի անդամի անձնական հաշվի մեջ, այնու ամենայնիվ գործադրվում և կոռպերատիվ աշխատանքի զարգացման համար և ամեն մի անդամ ժամանակին այս կամ այն զարգացումից իր այս կամ այն շահը կստանա։

Միակ վերապահումը, վոր այս տեսակետից պիտի անել, վորը մենք արդեն մատնանշել ենք, վերաբերում և ստանալիք ոգուտի չափին։ Ինքնին հասկանալի յեւ, վոր կոպիտ սխալ կոռպերատիվ հիմնական սկզբումքների արհամարհում կլիներ, յեթե

իր անդամների կարիքների բավարարման ծառայող կոոպերատիվ աշխատանքի նպատակը զարձվեր հնարավորին չափ մեծ ոգուտ ունենալը։ Ասեարական նման քաղաքականությունը սխալ կլինի ամենից առաջ նոր անդամներ գրավելու տեսակետից, վորովհետեւ նրա շնորհիվ ապրանքները կթանգանան և ուրիշ տիպի առեռուրի դեմ մրցելու ասպարիզում կոոպերատիվի համար ան-նպաստ վիճակ կստեղծվի։ Այդ պատճառով ապրանքների վրա արված հավելումների այն չափը, վոր վերջին հաշվով կարսող և վիրածվել ձեռնարկության ոգուտի, պիտի լինի չափազանց նը-վաղ և, համենայն դեպք, չի կարող հավասարվել շահի այն տո-կոսին, վոր տվյալ ժամանակում վերցնում և մասնավոր կապի-տալը։ Ըսթանալ այդ ուղիղ և մեր որերում ձգտել ոգուտի այն չափին, վոր պայմանավորված և մեր յերկրի կապիտալների ներկայիս աղքատությամբ, այդ նշանակում և այլասերել կոոպերատիվ աշխատանքի հիմքերը։ Ոգուտի չափը մեր ժամանակում պետք և սահմանափակվի այն նորմալ տոկոսով, վոր առաջներում, հին կոոպերացիայի փորձով, ապահովել և զործի կանոնավոր զարգացումը։

Յեթե մենք ոգուտների խնդրին մոտենանք ժամանակա-կից պետության և սպառկոոպերացիայի նորմալ կանոնադրության տեսակետից, ապա այնտեղ ոգուտի չափի վերտարյալ վոչ մի սահմանափակում կամ արդեւք չենք դանի։ Պետք և ասել վոր հնում, բոլոր յերկրների որենքներն ել այդ խնդրում կոոպերա-ցիայի համար վոչ մի հատուկ ուահմանափակում չեն կատարել։ Այդ բավական չի. Ինչ չափով զործը վերաբերում եր սեփա-կան անդամների բավարարման աշխատանքին, տիպիկ կոոպերա-տիվ-սուեկտրական շրջանառությամբ, շատ որենքը որություններ այդ շրջանառությունից ստացվող ոգուտը չելին հարկադրում այն չա-փով, ինչ չափով վորոշվում եր սահմանափոր ձեռնարկի կապիտալիստա-կան ոգուտի հարկը։ Որենսդիրներն այդ դեպքում յենում ելին այն տեսակետից, վոր վերեւում մենք հիշեցինք, թե այդ ոգուտը վա-թե ամեն մի առանձին անդամի սեփականությունն և, — այլ սե-փականությունն և կոոպերատիվների ամրող մասսայի։ Հարկե-րին վերաբերող մեր ժամանակակից որենքներում ձիշտ նույն կերպ վորոշ բացառություններ են արգում՝ կոոպերատիվ սահ-նութիւնի բոլոր աստիճանների վրա, կոոպերատիվի անդամներին ծառայող աշխատանքի համար միայն։ Նման շրջանառու-թյունն ինքնին համարվում և այսպէս կոչված հավասարեցու-

ցիչ տուրքի լրացուցիչ հարկին վոչ յենթակա և հենց զրանով որենսդիրն ընդգծում և իր վերաբերությունը դեպի նման շրջա-նառությունը։ 1924 թվին կոոպերատիվ խնդիրների քննու-թյան ժամանակ, ձիշտ և, հարց բարձրացավ, առհասարակ կոո-պերատիվ ոգուտի անթույլատրելիության մասին, բայց այդպի-սի սահմանափակումների ձգտող ձայները միանգամայն մենակ մնացին և ԽՍՀ Միության քաղաքական ու պետական բարձրա-գույն հիմնարկների։ հեղինակավոր վորոշումներում արձագանք չկտան։ Այդ ուղղությամբ կոոպերացիային տված միակ հաս-տատուն հրահանգ իր մեջ պարունակում և չափազանց ոգուտ-ներ անելու անթույլատրելիությունը միայն։ կոոպերացիային հրահանգված և վոչ մի դեպքում շուկայի գներից բաձր առեւտուր չանել և ընդհակառակն, ձգտել գների իջեցման։ Խնդիրն հաս-կանալի յի, վոր հենց այս մեկ ցուցմունքն արդեն վորոշ աստի-ճան ապահովում և, վորպեսզի կոոպերացիայի ոգուտները չա-փազանց մեծ չափեր ըընդունեն։ Փաստորեն, այժմ, ի հարկե, կա-րեք չի լինում խոսելու զուտ կոոպերատիվ աշխատանքից ստաց-վող նշանակալի ոգուտների մասին։ Այնուամենայնիվ, պետք և հիշել, վոր վոչ միայն մեզ մոտ, այլ և արտասահմանում, սեփական անդամների հետ տարած աշխատանքից ստացվող ոգուտը բավական խոշոր դեր և խաղում կոոպերատիվ կապիտալի աստիճանական մե-ծացման համար և այդ միջոցը վոչ մի դեպքում արհամարհել չի կա-րելի։ Մյուս կողմից՝ ոգուտի չափը ակամա սահմանափակվում և մի կողմից շուկայի նկատմամբ յեղած մրցությամբ և մյուս կող-մից՝ կառավարական միջոցներով՝ վորոշ ապրանքների մեծաքա-նակ ու փոքրաքանակ վաճառքների գների միջև յեղած տարրե-րության համար վորոշում և սահմանային չափ—և, գերջապես, յերրորդ կողմից ոգուտի չափը սահմանափակվում և կոոպերատիվ գործունեյության համար ստեղծված այն իիստ պայմաններով, վոր սահմանվում և կոոպերացիայի հիմնական մատակարարողի՝ մեր պետարդյունաբերության կողմից։

ՄԻԶՆՈՐԴԱԿԱՆ ՄԹԵՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՄՆԵՐԻՑ ԱՏԱՑ-ՎԱԾ ՈԳՈՒՏԸ

Աշխատելով գյուղում, սպառողական ընկերությունը բա-ցի իր անդամներին ապրանքներով բավարարելու գործառքներից,

չի կարող ուշադրության տոնել նաև իր անդամների աշխատանքով արտազրված մթերքներն պմբնանպաստավոր պայմաններով վաճառքի հանելու խնդիրը: Այդ աշխատանքը սպառկոպերացիայի հիմնական աշխատանք համարել չի կարելի և անհրաժեշտ է ձգտել վորպեսպի սպառողականի հիմնական աշխատանքի համար հատկացված միջոցները վոչ մի գեպօւմ չծախսվեն հում նյութերի վաճառքի վրա: Այնուամենայնիվ, այդ ասպարիզում կոռպերացիայի գործունեյության համար այնպիսի լայն ասպարեզիկա, վոր սպառկոռպերացիան վերջին ժամանակներս, տնտեսական նոր քաղաքացանության կիրառումից սկսած, իրերի բերումով մասնակցել և հայթայթման-պատրաստման աշխատանքին և վոչ մի կերպ այդ աշխատանքից ազատվել չի կարողացել: Չե վոր տնտեսական նոր քաղաքականության կիրառման առաջին տարիներում սպառողական կոռպերացիան համարյա միակ կոռպերատիվ կապներ հանդիսանում գյուղատնտեսական մթերքներ սպառող քաղաքյին բնակիչների և գյուղի միջն:

Այդպիսով, մթերման աշխատանքը սովորական և դարձել մեր գյուղական սպառընկերությունների համար և մենք պետք ե կանգ առնենք այն գերի վրա, վոր ունի այդ աշխատանք կոռպերատիվների համար, սեփական միջոցներ սահմանական տեսակետից:

Գործը կարգի դնելու գեպօւմ, առհասարակ չեն կարող առարկություններ լինել այն բանի գեմ, թե սպառողական կոռպերացիան կարող ե կատարել մթերման և միջնորդականարտահանական աշխատանքին՝ ստանալովներա համար վորոշ աշխատարձ և այդ գործառքներից ստացած ոգուուը հատկացնելով կոռպերատիվի շրջանառության միջոցների մեծացնելուն:

Սպառկոռպերացիայի հիմնական աշխատանքին ամեններն չխանգարող ամենալավ ձեր, վոր կարող ե ընդունելի լինել նման կազմակերպության համար—գա կոմիսարիո աշխատանքի ձեն և: Այդ ձեր կարող ե տարիվել յերկու կերպ: Կոռպերատիվները կարող են կոմիսարիո հանձնարարություններ ընդունել կոռպերացիայի ավելի բարձր աստիճանից՝ միությունից, իսկ վորոշ գեպօւմ նաև պետական կազմակերպություններից: Թե մեկը և թե մյուսը գործի համար կոռպերատիվին անհրաժեշտ միջոցներ են տալու, վորպեսպի նա գյուղատնտեսական մթերքների գնումներ ու մթերումներ կատարի: Բայ վորում՝ կոռպերատիվը իր աշխատանքի համար ստանում և վարձատրություն, վոր վորոշվու

և մթերքների պատրաստման գնի վրա վորոշ հավելումն անելով: Կոմիսարիոն հանձնարարությունները թույլ չեն տալիս փոփոխել այն գինը, վորով մթերքը պատրաստված և և մթերքը հանձնելիս պատվեր ավող կազմակերպությանը չի կարելի առաջարկել ավելի բարձր գին, քան այդ նույսատեսված և պայմանագրված կոմիսարիոն տոկոսներով: Նման հավելումով կիսախտիվ կոմիսարիոն աշխատանքի սկզբունքը և այդպիսի գիծ տանող կոռպերատիվն այլևս չի վայելի վոչ մի վստահություն: Ինքնըստինքյան, այդպիսի սկզբունքով կատարվող աշխատանքը միանգամայն կոռպերատիվ և և վոչ մի կասկած չի հարուցում: Կոմիսարիոն վճարի չափն այնպիս պիտի նշանակել, վոր կատարվելիք կազմակերպչական ըոլոր ծախքերը ծածկելուց հետո, այդ գործից կոռպերատիվը ստանա լրացուցիչ ոգուու՝ կոռպերատիվ դրամակլումն ավելացնելու համար:

Այս ձեր աշխատանքի առավելությունն այն և, վոր նման դեպքում կոռպերատիվն ամենենի գա վանքի չի յենքարկում իր սեփական մթօցները և համենայն գեպս, վոչ մի վաս չի կրում, յեթե, իհարկե, նա փոքր ի շատե ճիշտ և հաշվառել իր ծախքերն ու կանոնավոր և կազմակերպել մթերումների աշխատանքը:

Կոմիսարիոն գործառքների մի ուրիշ տեսակը ևս արժանի յենքանության ու խրախուսանքի: Կոմիսարիոն աշխատանքի այս ձեն ել այն և, վոր կոռպերատիվն իր անդամներից և առնասարակ գյուղացիներից կոմիսարիոն հանձնարարություն և ստանում՝ նրանց արտադրած ապրանքները վաճառելու համար: Պետք ե լավ իմանալ, վոր կոռպերատիվն այդ գեպօւմ պարտավորվում է իր անդամին, կամ առնասարակ մթերքի տիրոջը վերադարձնել ապրանքի վաճառքից ստացվող ըոլոր ոգուուները, վերցնելով միայն այն փոքր տոկոսը, վոր կոռպերատիվին հասնում և իր ծառայությունների համար: Այս գեպքում ևս, ավելի քան առաջն ձեր կիսարելիս, գների նկատմամբ պահպանվելու և կոմիսարիոն սկզբունքը: Շատ գեպքերում կոռպերատիվները հնարավոր են համարում այդպիսի աշխատանքի ոգուուից ավելի պակաս տոկոս վերցնելը՝ քան այն տոկոսն ե, վոր նրանք վերցնում են գնումների պատվեր տվող կազմակերպություններից: Կոռպերատիվների այդպիսի գիծը միմիայն վողջունել կարելի յե, վորով հետեւ այդպիսով նրանք պակելի յեն ամբապնդում մթերքների վա-

ճառքի համար նրանց ոգնությանը դիմողների վստահությունը՝
չիշի՛ր կոռպերատոր.—ՄԹԵՐՄԱՆ ԱՇ-
ԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ ԿՈՈՊԵՐԱՍԻՎԻ ՄԻՋՈՑ-
ՆԵՐԸ ԶՊԵՏՔ Ե ԾԱԽՍԵԼ, ԻՍԿ ԿՈՄԻՍ-
ՍԻՐՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ ՄԵԾ ՈԳՈՒՏ
ԶՊԵՏՔ Ե ՎԵՐՅՆԵԼ:

Այստեղ հատուկ ուշադրության է արժանի այն հավելյալ
ոգուտների հարցը, վոր կոռպերատիվ աշխատանքի ժամանակ
ստացվում է հացի կամ հում մթերքների վերջնական վաճառ-
քից: Համամիութենական կոռպերատիվ կազմակերպությունները—
Յենտրոսոյուղը, Սելսկոսոյուղը և այլն զյուղատնտեսական աշ-
խատանքի ժամանակ գործադրում են հենց այնպիսի մի ձե, վո-
րով վերջնական ոգուտների մի մասը հասնում է կոռպերատիվ-
պատրաստումներին մասնակցող բոլոր անձանց: Յեթե, ասենք,
արտասահման և արտահանվել վուշ, վոր հավաքել և գյուղական
կոռպերատիվը և վաճառքի վերջնական արդյունքով պարզվում
է, թե ոգուտն ավելի շատ է, քան հաշվված եր գործառքի սկզբում,
ապա Յենտրոսոյուղն ոգուտի այդ մասը վերապարհնում և շրջա-
նային միությանը, վերջինս իր հերթին ոգուտի վորոշ մասը
տալիս և պատրաստումները կատարող զյուղական սպառնկերու-
թյանն, իսկ ընկերությունը պարտավոր է այդ ոգուտն ամբող-
ջովին բաժանել իր անդամներին: Ահա այդ մուենտում է, վոր
չափազանց բարենպատ պայմաններ են ստեղծվում կոռպերա-
տիվի անդամների փայտվարներն ավելացնելու համար: Յեկ
իրոք, զյուղացիները, վոր շատ փաղուց հանձնել են իրենց վուշը
կամ այլ մթերքները և ամեննեին ել ինչ վոր հավելյալ միջոցների
չեն սպասում, ի հարկե, հեշտությամբ կհամաձայնեն իրենց
վերապարձված ոգուտի վորոշ մասը կոռպերատիվին հատկացնել՝
կոռպերատիվի միջոցները փայտվարներով ուժեղացնելու
համար:

ՀՈՒՄ ՆՅՈՒԹԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՏԱ- ՎՈՂ ՈԳՈՒՏԸ

Սպառկոռպերատիվի միջնորդական մթերման աշխատան-

*) Մեզ մոտ՝ Հայաստանում կարելի յե վերամշակել նաև
խաղողը, բամբակը և այլն:

քը կարելի յե խորացնել և լավացնել արտադրողներից կոմիսսիա-
յով վերցրած կամ գնած մթերքների, հում նյութերի սկզբնական
մշակումով: Հացամթերքները հատուկ մեքենաներով կարելի յե
չորացնել և տեսակների բաժանել, այսպիսով լավանում ե մթերք-
ների վորակը և հեշտանում ե նրա սպաստավոր վաճառքը: Այս-
պիսի գործառքները նպաստավոր և ոգտավետ են թե կոռպերա-
տիվի և թե նրա անդամների համար: Դիբախտությունը միմիայն
այն է, վոր ոգուտը ստանալուց առաջ անհրաժեշտ է լինում մի-
ջոցներ ծախսել՝ մաքրող և տյլ մեքենաներ ձեռք բերելու համար—
նորից կոռպերատիվի միջոցները հիմնական, սպառղական աշխա-
տանքից կարելու վտանգ և առաջանում: Ըստ վորում, այսպիսի
աշխատանքի վրա գործադրվող գրամները գործի մեջ են դըր-
վում յերկար ժամանակով և կորսվում են սպառղական աշխա-
տանքի համար: Մինչդեռ հացի կամ այլ հում նյութերի ավելի
հաճախակի գնումների ու վաճառքի դեպքում գրամները կարող
են արագ շրջանառություն կատարել և վերադառնալ իրենց հիմ-
նական աշխատանքին: Այդ պատճառով կոռպերատիվ սպառղ-
ները պետք է հիշեն հետեւյալ կանոնը. ինչքան ել և աշեավետ լինի
հացի յեկ հում նյութերի մօւկումք, այնուամենայնիվ, սպա-
ռղական կռովերացիան կարող է կատարել այդ դրա համար
սացած հատուկ միջոցներով միայն: Այդ պայմաններում, ի
հարկե, մեծ ոգուտների մասին խոսք լինել չի կարող, վորովհետեւ
այդ ոգուտները համարյա թե ամբողջությամբ կարգեն միջոց-
ների տիրոջը:

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՏԱՎՈՂ ՈԳՈՒՏԸ

Ավելի վտանգավոր է, յերբ մեծ ոգուտ ստանալու մտադրու-
թյամբ սպառղական կոռպերացիան ընդարձակում է իր արդյու-
նաբերական գործունեյությունը: Տնտեսական նոր քաղաքակա-
նության սկզբի տարիներում համարյա ամրող կոռպերացիան
հիվանդացավ այդ վտանգավոր ու վարակիչ հիվանդությամբ:
«Ճիրոջ սպասող» այնքան շատ արդյունաբերական ձեռնարկներ
կային, այնքան գրավիչ եր թվում աշխատանքի համար արգեն
պատրաստի գրամագլուխ ստանալը, վոր շատ ու շատ կոռպե-
րատիվներ չկարողացան այդ զայթակությանը դիմաղրել և ձեռք
բերին մեկը մյուսից փոքր ու անպետք արտադրական
ձեռնարկներ: Մեծ մասամբ կոռպերացիան դառնապես հիաս

թափվեց. ձեռնարկություններն անցան նրա ձեռքը կիսավեր դրությամբ, պահանջեցին հիմնական նորոգման ու կահավորման մեծ ծախքեր. կոռպերացիան այդ բոլորի համար իր ուժերից վեր պարտքեր արեց, իսկ ոգուտը համարյա բոլոր զեպքերում մնաց իրը յերազ. Աստիճանարար այդ վոգերությունը սահմանափակվեց և կոռպերացիայի ձեռքում մնացին միմիայն իսկապես ամուր, շահավետ ու պիտանի ձեռնարկները:

Այս գառն փորձը լավ պիտի հիշեն սպասողական կոռպերացիայի բոլոր աստիճանների վրա աշխատողները և հատկապես կոռպերատիվ սկզբնական ցանցը:

Հիշեր կոռպերատոր.—ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՄԱՆԱԿԱՆ ՄԱԳԼՈՒԽ ՈՒՆԵՑՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԶԲ:

Հատկապես պետք է ընդգծել արդյունարերական ձեռնարկների ոգուտին վերաբերող մի հանգամանք, այդ ոգուտի մեջ մտնում են այնպիսի մասեր, վորոնց ստացումը դյուրությամբ կարելի յետպահովել ներքին առեւտրական և վոչ թի արդյունարերական աշխատանքով: Այսպես որինակ՝ յեթե կոռպերատիվը վորեկ տեղից հուռ նյութեր և ստանում, ապանա կարող է վաճառել այն կողմանակի կերպով և կարող է շահել գների տարբերությամբ: Ճիշտ նույն կերպ, իր սեփական ձեռնարկի պատրաստած ապրանքից ստացվող ոգուտի մի մասը նա կարող է փոխարինել առեւտրական ոգուտով, յեթե այդ միենույն ապրանքը գնելու լինի կող մնակի չտեղից և վաճառի ճիշտ նույն կերպ, ինչպես իր արտադրությունն է վաճառում:

Միայն առանձին, բացառիկ գեպքերում կարելի յետպարացնել սկզբնական կոռպերատիվներին կից արդյունարերական ձեռնարկ կազմակերպելը: Բայտ վորում, արդարացումը պետք է փնտառել վոչ թի ձեռնարկի ոգտավետության, այլ կոռպերատիվի անդամների անհրաժեշտ կարիքները բավարարելու մեջ: Այդ առավել ևս կարենոր է, վորովհետեւ բացառիկ զեպքերում միայն հնարավոր է լինում կոռպերատիվի առեւտրական աշխատանքին վորեկ մաս տրամադրել արդյունարերական աշխատանքի ոգուտից, յեթե, ի հարկե, արդպիսի ոգուտ յերբեք ստացվում եւ Մեր ներկա պայմաններում ձեռնարկությունների նորոգման ու

լրացման ծախքերը համարյա ամբողջովին կլանում են հնարավոր ոգուտները:

Ահա թե ինչու արդյունարերական գործունեյությանը միջոցները հատկացնելիս, պետք է հրաժշետ տալ այդ դրամներին և նրանց գուրս հանել առեւտրական աշխատանքի զարգացման ծրագրից:

Ս.յանեղից հետեվյալ յեզրակացությունը պիտի հանել. արտագրությունից ստացվող ոգուտը լավագույն գեպիում ավելացնում է կոռպերատիվի արտագրական, բայց վոչ առեվտրական միջոցները:

ԿՈՌՊԵՐԱՏԻՎԻ ԱՐԵՎՏՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՍԱՑՎՈՂ ՈԳՈՒՏԸ

Առեւտրական գործունեյության անվան տակ, այդ բառի ամենալայն իմաստով, պետք է հասկանալ ամեն տեսակ առեւտրական ու տնտեսական աշխատանք, վոր չի ուղղված սեփական անդամներին: Տառայիշուն: Բայց հաճախ կոռպերատիվի առեւտրական ձեռնարկություն ասելով հասկանում են գործունեյության ավելի սահմանափակվածան, այսինքն՝ այն ձեռնարկությունները, վորոնք իրենց վոգով հակասում են կոռպերատիվ սկզբունքներին: Այդ տեսակետից պետք է ասել, վոր կոռպերատիվի տրվյալ ասպարեզի աշխատանքի կոռպերատիվ եյությունն ըմբռներու հարցում կան անցման մի շարք աստիճաններ, բայց միակ ուղիղ բաժանումը կլինի այն, վոր մենք վերը ցույց տվինք. այսինքն՝ վոչ իր անգամների հետ կատարած բոլոր գործառները կոռպերատիվի համար պետք է համարվեն առեվտրական գործառներ: Նույն ձևով առեւտրական պետք է կոչվի նաև այդ գործառներից ստացվող ոգուտը:

Դեռ նախանեղափոխական շրջանի կոռպերացիայում շարունակ և շատ վորով կերպով կոռպերատորները բախվում եյին այն ոգուտի հարցին, վոր սպասողական ընկերություններն ստանում եյին իրենց կազմի մեջ չմտնող անձանց ու հիմնարկներին վաճառած ապրանքներից: Միանգամայն պարզ է, վոր այդպիսի աշխատանքը նշանակալից չափով բարձրացնում և առեւտրական գործառներից ստացվող ոգուտը (հասկանելի յեւ գործը հաջող վարելու զեպքում) և կոռպերատիվի անդամների փայտ-

դրամագլխի համար կարող ե առաջացնել անհամոչափ բարձր ոգուտի տոկոս: Ոգուտի այդպիսի տարբերությունը կարող է հատկապես մեծ լինել ժամանակակից պայմաններում, յերբ կոռպակերատիվներից մեծ մասի շրջանառությունների մեջ ոտար, գրաված միջոցները հսկայական տոկոս են կազմում և այդ ոտար միջոցների ոգտագործությունից ստացվող յեկամուտը լցվում է ոգուտի ընդհանուր կաթսայի մեջ: Այդպիսի ոգուտները սահմանափակվում են նրանով, վոր մասնավոր անձանց հետ կատարած վաճառքի համար կոռպակերատիվի շրջանառությունների վրա հավասարեցնելու համեմատաբար բարձր չափով և կիրառվում: Այնուամենայնիվ, առուրքը վճարելուց հետո ել ոգուտահակը կարող է չափազանց խոշոր լինել:

Այսպիսի կարգը արմատապես հակառակ է կոռպերատի գաղափարներին, վրովհետեւ նաև տանում է գեղի փայտերեր հարստագում՝ ի հաշիվ մասնավոր գնորդների:

ԽՍՀ Միության ժամանակակից պայմաններում այդ կարգը ավելի և անհամապատասխան է ժամանակի փոփուն և առելորական գործունեյությունը կոռպերատիվ հունի մեջ գրավելու համար, քոչ մի ջանք չպետք է խնայել:

Դեպի նույն կողմն են ուղղված նաև ԽՍՌ Միության կեկավար Հիմնարկությունների քաղաքական ցուցմունքները:

Հիշե՛ք կոռպերատոր.—ՄԻ՛ ՏԱՐՎԻՐ
ՆԱԿԻՆԵՐԻՆ ԱՊՐԱՆՔ ՎԱՃԱՌԵԼՈՎ

Այսպիսով, սկզբունքքային մոտեցման տեսակետից առևտրական աշխատանքի նկատմամբ յերկու կարծիք լինել չի կարող: Յեթե վերջին տարիների փորձը ցույց է տալիս, թե կոոպերացիոն առևտրական գործառքներով շատ է տարվում, ապա դրա պատճառները պիտք է փնտռել կոոպերատիվ աշխատանքի բացառիկ պայմաններում: Տնտեսական նոր քաղաքականության տուաջին շրջանում մեր ամբողջ յերկիրն ապրեց այսպես կոչված «սկզբնական կուտակումը», յերբ առևտրի վողին տիրացել ել ամենալայն շրջաններին: Այդ միենալուն ուղղությամբ եր թեք վում կոոպերացիան և այն ել իր աղքատիկ միջոցներով, վորոն և տնտեսական նոր քաղաքականության ժամանակ նաև սկսել եր աշխատանքը:

Զգտելով իր զբամագլուխների արագ ավելացմանը և զբա հետ
միասին նաև շրջանառությունների զարգացմանը՝ կոռպերացիան
հեշտությամբ վոտք դրեց առևտրական գործարքների զբավիչ,
բայց սխալ ուղիի վրա:

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐՆԵՐՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ

Կար նաև մի այլ պատճառու, վոր սպառողական կոռպերացիայում ակամայից ստեղծեց անցակալի թեքում Վորոշ տարբերություն չկար կոռպերատիվի անդամների և կողմնակի անձանց միջև, ավելի ճիշտն ասած՝ ըոլոր քաղաքացիները պարտավոր եյին լինել գորևե կոռպերատիվի անդամ, այդ պատճառով սպառողական կոռպերացիան իր ամբողջությամբ, ըստ եյության, կողմնակի առևտուր չեր անում, այլ մի կոռպերատիվ ապրանք եր վաճառում մի ուրիշ կոռպերատիվի անդամի:

Սպառողիկան կոռպերացիան այդ ընդարձակ գործունեյությունը տանում եր, կամ պետք է տաներ (վորովհետեւ համարակական միջոցները դեռ ևս անբավարար ելին լայն թափ ընդունելու համար եր) իրը ժառանգութույն այն բաշխիչ աշխատանքի, վոր լեղել եր նախորդութական կոմունիզմի շրջանում:

Տնտեսական նոր քաղաքականության առաջին շրջանում
պետական պատվերներն ընդունեցին գլխավոր պայմանագրերի
ձև, բայց ըստ եյության, կոռպերացիայի համար նրանք մնում
ենին իրը պարտադիր:

Բոլոր այս պատճառները կոոպերատորների պատկերացման
մեջ ջնջեցին առևտութիւն և սեփական անդամների ու կողմ-
նակիների համար կատարվող անտեսական աշխատանքի սահ-
մանները: Ինքնին հասկանալի յե, զոր պետության պատվերնե-
րով կատարվող և հասարակական ոգտագետության դիտավորու-
թյուններից բղխող այդ աշխատանքը մենք վոչ մի կերպ չենք
կարող դասել արգելված առևտութական աշխատանքների շարքը:
Ժամանակի ընթացքում պետության պատվերներն ավելի ու ա-
վելի կրծատվում են, այդ պատվերների կատարումը մտնում է
կոոպերատիվ հուսի մեջ և հեռանում է առևտութական մեթոդնե-
րից: Համենայն դեպքու, կոոպերացիայի աշխատողների այդպիսի
աշխատանքը պախարակելը՝ կլիներ միանգամայն անհիմն:

ՆԵՐ-ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՄՆԵՐ

Դժբախտաբար մի ամբողջ շարք կոռպերատորներ չկարողացան հավասարակշռություն պահպանել այն սայթաքուն ուղիղ վրա, վոր նրանց առաջ բացել եր տնտեսական նոր քաղաքականությունը։ Տարվելով հարստանալու, շահելու վոգով, նրանք զբաղվեցին այնպիսի մի գործունեյությամբ, վոր վոչ մի կոռպերատիվի դարպասով անցկացնել չի կարելի։ Այդ գործունեյությանն են վերաբերում՝ առաջին հերթին, այնպիսի հասարակայնորեն փասակար հիմնարկներ—ինչպիսին են գարեջրի կրպակների ցանցը, վոր գարեջրի սեփական գործարաների վրա եր հենցում, ուտեստեղինի շքեղ խանութները, քեֆեր անող ու շոայլությամբ ապրող հասարակության համար հարուստ կահավորումով բացված և թանգ ռեսորսաները, ամեն տեսակ թույլատրելի ու անթույլատրելի զվարճատեղիները բացելը և այլն։ Ի հարկե, կոռպերատիվ միջոցները կոռպերատիվ վոգուն անհամապատասխան այդպիսի կազմակերպությունների վրա գործադրելն առավել ևս սխալ ու վրդովեցուցիչ եր այն ժամանակ, յերբ բնակչության լայն շրջաններին իսկական կոռպերատիվ աշխատանքի համար դրամներ ելին տրամադրվում չափազանց սահմանափակ քանակով։

Դրա հետեւանքն եղավ մասսայի ոսարացումը նման կոռպերատիվ կազմակերպություններից և շատ մեծ զժվարությամբ կարելի յեղավ արմատախիլ անել դեպի կոռպերացիան ստեղծված այն անվտան վերաբերունքը, վոր սերմանվել ու անել եր աշխատանքի այդպիսի ձեերով։ Այդպիսի տիպիկ խոսքի ամենավատ իմաստով, առեւտրական գործունեյության իսկական կոռպերատորները պետք ե վերաբերվեն միանգամայն անբարյացակամ և ամենաին չպետք ե գայթակղվեն գինուց ու ուտեսիղենից ստացվող խոշոր ոգուտից։

Հիշե՛ր կոռպերատոր. — ՎՈՉ ԿՈՌՊԵՐԱՑԻՎ. ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ՍՏԱՑՎՈՂԴ ՈԳՈՒՏԾԸ ՔԱՂՅՑԻ ԹՈՒՅՆ Ե, ՎՈՐ ՍՊԱՆՈՒՄ Ե ԿՈՌՊԵՐԱՑԻՎ ԿԵՆԴԱՆԻ ՍԿԶԲՈՒՆՔԸ։

Այն գեպքում, յերբ նման գործի մեջ արդեն թաղված կոռպերատիվ միջոցները հեշտությամբ չի կարելի հանել ու շրջանա-

ության մեջ գնել այլ նպատակներով, պետք ե համառորեն հանձնարարել, վոր, համենայն զեպս նման գործից ստացվող ոգուտները ծախսվեն վոչ թե նման հիմնարկությունների ծավալման ու զարգացման վրա, այլ տրամադրվեն ընդհանուր կոռպերատիվ սպառողական կարիքներին ու կուլտ-կրթական նպատակներին։

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՌՊԵՐԱՑԻՎԻ ՎԱՍՏԱԿԻ ԲԱՇԽՈՒՄԸ

Սպառկոռպերացիայի դրամագլուխներն ամրացնելու և զարգացնելու համար չափազանց կարենոր ե, վորպեսզի գործառքներից ստացվող զուտ վաստակը բաժանվի կանոնավոր կերպով։ Նորմալ կանոնավորությունն առաջարկում է բաշխման հետեւյալ կարգը։

ա) Ոգուտի 40% -ից վոչ պակասը հատկացվում է հիմնական գրամագլուխներին. բ) Փայտավճարներին ավելացվում են տոկոսներ, բայց վոչ ավելի բանկային միջին տոկոսից. գ) Կոռպերատիվի անդամներն պրեմիա և տրվում իրենց կատարած գնումների և հաշվով կոռպերատիվին հանձնած մթերքների համար. դ) Գումարներ են առանձնացվում հատուկ դրամագլուխներ կազմելու կամ այդ դրամագլուխները լրացնելու նպատակով (ահս IV գլուխը), յե) Հատկացումներ են կատարվում զանազան տեսակ կուլտ-կրթական հախածեռնությունների աջակցելու համար։

Այսուեղ ամենասկզ ուշագրության արժանի յե այն տարրերությունը, վոր կա՞մ մի կողմից Փայտավճարներին տրվող տոկոսների և մյուս կողմից՝ գնումների համար տրվող պրեմիայի միջեւ։

Այն ժամանակ, յերբ փայտավճարներին տրվող տոկոսը սահմանափակված է բանկային միջին տոկոսով, գնումների համար տրվող պրեմիայի չափը սահմանափակված չի. Կանոնավորություն կազմողները սրանով հատկապես կանխել են ցանկացել մասնակի գործառքություն կոռպերատիվ ձեի տակ ծածկելու վատանցը, վոր դրամագլուխը կոռպերատիվ ձեի տակ վատանցը Յեթե կանոնավորության սահմանափակումը չլինել, մեծ քանակ կությամբ փայտեր գնող մասնավոր ձեոնարկուն կոռպերատիվ ցուցանակի տակ կարպողանար մեծ հարստություն հավաքել։ Իսկ գնումների համար տրվող պրեմիան այդպիսի վատանց չի առաջացնում։

Լրիկ փայ ունեցող անդամների փայտավճարին հասանելի

ոգուտի տոկոսը և գնումների պրեմիան անդամներին արվում են
հաշվետվության հաստատումից յերեք ամիս հետո:

Նշանակում ե՝ հաշվետվության հաստատման ժամանակաշր-
ջանում կոռպերատիվի վարչությունը պետք է կանխիկ զրամ
պատրաստի՝ այդ վճարումները կատարելու համար: Ասենք՝ ընդ-
հանուր կամ լիազորական ժողովը կարող է փորձում կայացնել՝
լրիվ պարտադիր փայտավար մուծած անդամների համար տոկոս-
ներից և պրեմիայից լրացնելու մասին:

Փայերը գեռ լրիվ չվճարած անդամների կիսատ փայտա-
րին տոկոսային հատկացումներ չեն արվում, իսկ գնումների հա-
մար նրանց հասանելիք պրեմիան, համաձայն կանոնադրության,
ամենից առաջ վերածվում է փայտավարի փայտավարային պար-
տադիր գումարը լրացնելու նպատակով:

Այսպիսով կանոնադրությամբ լավ են պաշտպանվում կոռ-
պերատիվի շահերը ու ավելի լավ, քան նախահեղափոխական
կանոնադրություններով, ըստ վորի, ամեն մի անդամ ազատո-
րեն կարող եր տնօրինել իր փայտավարի տոկոսները, իսկ ընդ-
հանուր ժողովը չեր կարող բոլորի համար պարտագիր փորչում
ընդունել՝ փայտավարի տոկոսները փայտադրամագլխի վերածելու
մասին:

Հիշե՛ք կոռպերատիվի անդամներ.—Մի՛
ՎԱԶԵՔ ՏՈԿՈՍ ՅԵՎ ՊՐԵՄԻԱ. ՍՏԱՆԱԼՈՒ
ՀԵՏՎԻՑ—ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԶ ՄՆԱ-
ԼՈՎԱՅԴ ԴՐԱՄՆԵՐԸ ՀԵՆՑ ԶԵ՛Զ ԶԵ՛Զ ԵՆ
ՈԳՈՒՏ ԲԵՐՈՒՄ:

Գ Լ Ո Ւ Խ Խ Վ

ԿՈՂՊԵՐԱՏԻՎ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐ

Սպառկոռպերացիայի ներկայումս գործող նորմալ կանոնա-
դրությամբ սկզբնական կոռպերատիվ ցանցի համար նախատես-
ված են յերեք տեսակ դրամագլուխներ—հիմնական դրամագլուխ,
փայտավագլուխ և հատուկ դրամագլուխ: Կանոնադրության
համաձայն՝ հիմնական դրամագլուխը կազմվում ե. ա) Մուտքի
վճարներից, բ) ամեն տարվա ոգուտի 40 % հատկացումներից,
գ) ընկերության հիմնական դրամագլուխներին արվող տոկոսնե-
րից: Հիմնական դրամագլուխը վկանվորապես նախատեսում է
կայք, շենքեր ձեռք բերելու հաստատված հաշվետվությունների
համաձայն՝ ընկերության վասները ծածկելու համար. բայց, ընդ-
հանուր ժողովի վորշմամբ այդ դրամագլուխն իր ամբողջու-
թյամբ, կամ նրա մի մասը կարող է գտնվել նաև ընկերության
շրջանառության մեջ:

Հիմնական դրամագլուխը սպառողական ընկերության հա-
մար հատկապես կարևոր նշանակություն ունի, վորովհետեւ նա
կոռպերատիվի դրամագլուխների անբաժան մասն և կազմում:
Հիմնական դրամագլուխը չի պատկանում առանձին անդամներից
և վոչ մեկին, այլ պատկանում է նրանց միությանը—սպառողա-
կան ընկերությանը: Մինչև իսկ ընկերության լուծարքի դեպքում
հիմնական դրամագլուխը չի բաժանվում ընկերության նախկին
անդամ-փայտաների միջև, այլ գործադրվում է հատկակայ-
նորեն ոգտակար նպատակներով—կոռպերատիվ կամ այլ: Դրա
հետևանքով կանոնադրությունը փորչել ե, վոր կոռպերատիվի
ստացած ոգուտների 40 % -ը պետք է հատկացվի հիմնական դրա-
մագլուխն: Այդ միջոցով ուժեղանում է կոռպերատիվի
հասարակական ունեցվածքը և կոռպերատիվն ավելի յե-
տիրանում—նա անկախ է դառնում իր առանձին անդամների պա-
տահական արամագրություններից: Նույն պատճառով՝ հիմնական

դրամագլխի են վերածվում նաև ընկերության անդամների մուտքի վճարները, վոր ինչպես առացինք, վոչ մի դեպքում չեն վերադարձվում:

Հիշե՛ր կոռպերատոր.—Ա.Վել.ԱՅՐՈՒ ԿՈՌ ՊԵՏԱՏԻՎԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽԸ ԴՐԱՆՈՎ ԴՈՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԱՀԸ ԱՆՑԱՀԻՑ ԱՎԵԼԻ ԵՄ ԲԱՐՁՐԱՅՆՈՒՄ:

Մյուս կողմից ներկայիս կանոնադրությունը հիմնական դրամագլխի ավելացման դեպքում ապահովում է նաև կոռպերատիվի փայտաբերի շահը: Իրոք, ինչպես վերը հիշատակեցինք, հիմնական դրամագլխի նպատակներից մեկն ել այն է, վոր նա ծածկի ընկերության գործառքներից առաջացող հնարավոր ֆինանսները: Հնում այդ նպատակով սպառողական ընկերություններն ունենում են պահեստի հատուկ գումարներ:

Հիմնական դրամագլուխը կոռպերատիվի բոլոր դրամագլուխների ամենահաստատ ու մնայուն մասն է կազմում և բնական են վոր հենց նրանով կարելի յե ձեռք բերել այն արժեքները, վորոնք չեն մասնակցում կոռպերատիվի առևտրական շրջանառությանը և հանդիսանում են կոռպերատիվի բարանսի ակտիվի անփոփի, կամ համարյա անփոփի մասը: Այդպիսի արժեքները են շենքերը, գույքը և առհասարակ այն կայքերը, վորոնք առևտրութամար չեն: Հատուկ ուշադրություն պիտի դարձնել վորպեսպի նման արժեքները կոռպերատիվի բարանսում ավելի մեծ չինչն քան հիմնական կապիտալը—հակառակ դեպքում կոռպերատիվի գժվարությամբ կկարողանա իր պարտավորությունն արագ ու հեշտ կատարել: Հիմնական դրամագլխի մեջ մտնող արժեքները սովորաբ մեծ գժվարությամբ են դրամի վերածվում յեվ նրանցով պարտավորություններ վճարելը գժվար է:

Այդ առևտրական վասները ծածկելու իմաստով, վորոշ անհարմարություն և ներկայացնում հիմնական դրամագլխի և պահեստի փոնդի միմիանց խառնելը, վորովհետեւ կարող է պատահի, վոր հիմնական ամբողջ դրամագլուխը դրված լինի գժվալ վաճառվող ապրանքների մեջ: Թժբաղտարար, ներկա պայմաններում հաճախ գործն ավելի վատ դրության մեջ է լինում: Գույքը

և կայքի մեջ դրված են լինում վոչ միայն ամբողջ հիմնական կապիտալը, այլ և հաճախ, ամբողջ փայտագրամագլուխն ու ոտար, կողմանակի (փոխ առած) միջոցները: Իրերի այսպիսի դրությունը ի հարկե, չափազանց վտանգավոր է կոռպերատիվի համար, վորովհետեւ վարելի ամենափոքրիկ կրծատման դեպքում կոռպերատիվը մեծ գժվարությամբ կվճարի իր վրա վերցրած դրամական պարտքերը:

Հիշե՛ր կոռպերատոր.—ԳՈՒՅՔ ՅԵՎ ԱՆՇԱԲԺ ԿԱՅՔ ԶԵՄՔ ԲԵԲ ՄԻՄԻԱՅՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽԻ ՍԱՀՄԱՆԵՐՈՒՄ—ՀԱԿԱՌԱԿԱԿ ԴԵՊԲՈՒԻՄ ԿԻՍԱԽՏԵՍ ԿՈՌՊԵՐԱՏԻՎԻ ՎՃԱՐՈՒՄԻՆԱԿՈՒԹՅՈՒՆ:

Ընդհակառակն, յեթե հիմնական դրամագլխի մի մասը չծախսվի անշարժ կայքի համար, կոռպերատիվի գործերը դրանից վոչ մի փաստ չեն ուստանա: Յեվ վորպեսպի հիմնական դրամագլուխն ել առևտրական նպատակների ծառայելուց վոչ մի վնաս չստանա, մոցգած դրամագլխի այդ մասին հատկացգող տոկոսների կառուները, վորպեսպի հիշված այդ տոկոսները կցվում են հիմնական դրամագլխի գումարին: Խսկապես վոր, յեթե կոռպերատիվն ունի անշարժ կայք, ապա ժամանակի ընթացքում առհասարակ այդ կայքի գինն ավելանում է և վրանով ավելացնում է հենց հիմնական դրամագլխությունը: Խսկ յեթե առևտրական շրջանառության մեջ հիմնական դրամագլխին վերը մատնանշված ձեռվ տոկոսներ չհատկացնենք, ապա հիմնական դրամագլուխը չի աճի:

ԿՈՂՊԵՐԱՏԻՎԻ ՓԱՅՄԱՆԱԳԼՈՒԽԸ

Նորմալ կանոնադրության համաձայն, փայտագրամագլուխը կազմվում է կոռպերատիվի անդամների մուծած փայտագնարներից և գործադրվում է ընթացիկ գործառքների համար: Կոռպերատիվի վաստակի բաշխման հարցը քննելիս մենք արդեն մատնանշեցինք, վոր այդ ոգուտի մի մասը կարելի է հատկացնել կոռպերատիվի ամեն մի անդամի փայտագնարն ավելացնելուն, այսպիսով, բնական ե, վոր կմիծանա նաև փայտագրամագլուխը: Փայտագրամագլ-

խի աճումը չափազանց կարեոր և կոռպերատիվի անդամների ինքնագործունեյությունը բնորոշելու համար: Յերկրորդ ու յերրորդ գլխում մենք արգեն բավարար չափով խոսել յենք փայտագաների նշանակության մասին: Այստեղ անհրաժեշտ ե միմիայն շեշտել հիմնական և փայտագանային դրամագլուխների տարրերությունը: Յեթև փայտամագլխով վորոշվում ե ընկերության անգամների ինքնագործունեյությունը, ապա հիմնական դրամագլխով ընորոշվում ե կոռպերատիվի փարչուրյան գործունեյության գործառքներից, վորոշինետե հիմնական դրամագլխի գլխավոր աղբյուրն ընկերության գործառքներից ստացվող փաստակն ե կազմում:

Կանոնադրության ցուցմունքը՝ թե փայտադրամագլուխը գործադրվում ե ընթացիկ գործառքների վրա, մի անգամ և նախագուշացնում ե, վորպեսզի փայտագանային միջոցները չտրամադրվեն հիմնական դրամագլխի մեջ մտնելիք արժեքները ձեռք բերելու նպատակով: Յեզի իրոք, յեթև փայտագանային վերածենք անշարժ գույքի, — ասենք վորոշ հողամասի կամ տանապատ զրա անձառությունը ակնհայտ կլինի. չեփոր, յերբ անդամներն իրենց փայտագաները հետ պահանջեն՝ անհնարին կլինի հողի կամ տան այս ու այն կտորը նրան հատկացնել: Նշանակում ե՝ նրանց փայտագաները վերադարձնելու համար այս գեպքում դրամը վերցնվելու առեւտրական գործառքներին արամագրված միջոցներից և հենց դրանով խախտվելու յե կոռպերատիվի փինանսական առողջությունը: Պարզ ե և այն, վոր անդամագաների զման գործադրումով աղվազվում ե փայտագաների հիմնական նպատակը. չե վոր փայտագաները դանձվում են անդամներին անհրաժեշտ ապրանքներ ու մթերքներ հայթեցնելու համար և վոչ թե անշարժ կայքի ու գույքի մեջ թաղվելու նպատակով: Նույնքան սխալ ու աննպատակահարմար և սպառզական կոռպերատիվի փայերով արգյունաբերական ձեռնարկներ կազմակերպելը կամ այդպիսի ձեռնարկների փայտատեր գաղփում այդ նպատակով կարու յեղած դեպքում այդ նպատակով կարու յեն ոպտագործվել հատուկ գանձումով ձեռք բերված միջոցներ:

Հիշի՞ր կոռպերատոր. — ՓԱՅՅԱԴՐԱՄԱԳԼ. ԼՈՒԽՆԵՐԸ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԵՆ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՅԵՎ ՎՈՐՉ ԹԵ ԱՆՇԱՐԺ ԿԱՅՔ ԶԵՐՔ ԲԵՐԼՈՒ ԿԱՄ ԱՐ. ԴՅՈՒՆԱԿԱՆ ԶԻՍՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԶԵՐՆԱՐԿԱՆ ՀՈՒՆԱՐԿԱՆ ՀՈՎԱՆԱԿՈՎ.

ԿՈՂՊԵՐԱՏԻՎԻ ՀԱՏՈՒԿ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐԸ

Ինչպես հենց նոր մատնանշած արդյունաբերական նպատակներով, այնպես ել այլ բազմաթիվ կարիքների համար սպառողական ընկերությունների կանոնադրությունը թույլատրում է կազմել հատուկ դրամագլուխներ: Հատուկ դրամագլուխները կազմվում են. ա) այդ դրամագլուխների ոգտին անդամների կողմից մուծվող կամավոր վարդներից, բ) զուտ վաստակի հատուկ կացումներից, գ) վաճառվող ապրանքների վրա արվող հատուկ հավելումներից, դ) այդ դրամագլուխների ոգտին ստացվող նվիրատվություններից, յե) ամեն տարի այդ դրամագլուխների գումարին տրվող տոկոսային հատկացումներից:

Հատուկ դրամագլուխները կարելի յե գործադրել հատուկ առևտրի ու արդյունաբերական ձեռնարկների կազմակերպման, ինչպես և ամեն տեսակ կրտսուր-կրթական կամ հասարակական հիմնարկների համար, վորոնց հիմնարկման իրավունքը նախատեսված է ընկերության կանոնադրությամբ: Դժբախտաբար, սպառությունը նույնանուր աղքատությունը մինչև այժմ հատակագիտացիայի ընդհանուր աղքատությունը մինչև այժմ հատակագործությունը չի ընձեռում հատուկ դրամագլուխներ կազմելու գործը զարգացնելու համար:

Սպառողական կոռպերատիվի կանխիկ միջոցներն այնքան քիչ են, վոր նա հատուկ միջոցներ առանձնացնելու հնարավորություն չունի. բացի դրանից, աշխատանքի պայմանների արագ փոփոխման հետևանքով՝ դժվար ե մշտական միջոցներ հատկացնել կոռպերատիվ աշխատանքի վորեև ճյուղին: Մինչդեռ հատուկ դրամագլուխները չափազանց նպատակահարմար մար ու ոպտավետ են կոռպերատիվի կանոնավոր աշխատանքի համար, Դրանից շահում են թե այն հատուկ գործը, վորի համար միջոցներ են առանձնացվում և թե կոռպերատիվի ընդհանուր փինանսական վիճակը: Իրոք, նման դեպքում հասարակական աշխատանքն ստանում ե մշտական ու ամուր հենարան և կարող ե ծավալել ծրագրված աշխատանքը: Ընդհանուր գինանական կամարդական համար և սա չափազանց կարելու ու ոպտակար և այդպիսի հատուկ միջոցներ ստեղծելը: Նախ ակամայից մի ավելորդ անդամ ել կոռպատվում ե ավելալ գործառքի կարերությունն ու նրան միջոցներ հատկացներ հատկացներու հնարավորությունը և յերկրորդ՝ աշխատանքի այդ ճյուղին վոգորության մոմենտին կոռպերա-

տիվի ուժերից վեր միջոցներ տրամադրելուց խուսափելու հնարավորություն և ստեղծվում:

Ամենից ավելի նպատակահարմար ե, վոր անմիջապես անգամների կարիքներին ծառայող արդյունաբերական զանազան ձեռնարկներուն նպատակով կազմվեն հատուկ դրամագլուխ ներ: Նման գումարներ կարելի յեւ ստեղծել փոերի, ճաշարան ների, թեյատրների և նման այլ ձեռնարկների համար: Այդպիսի ձեռնարկություններին նպաստող շատ լավ նշան պիտի համարել, յեթե անդամները կամավոր ցանկություն են հայտնում՝ գողծը հատուկ դրամագլուխներով ապահովելու համար վորոշ մուծումներ կատարել:

Պետք ե ասենք, վոր կանոնադրության համաձայն, այդ մուծումները կրում են անվերագում բնույթ, վրովհետև նրանք չեն ավելացվում փայերին, այլ վորպես հիմնական դրամագլուխ, համարվում են անբաժանելի միջոցներ: Ավելի ևս արժեքավոր ե անդամներին յութական զոհողությունը՝ ավելի ևս ընդգծվում ե նախագծվող հիմնարկի անհրաժեշտությունը, յեթե այդ գործի համար հաջողվում է հատկապես զումարներ գանձել: Ինքնին հասկանալի յեւ, վոր նման ձեռնարկություններն իրենց կազմակերպման համար նվիրատվություն տվող անդամներին վորոշ արտոնություններ կտան զեղչերով և այլ միջոցներով, վորպեսզի հատուցեն այդ անդամների կատարած զոհողությունը:

Գյուղական վայրերում հատուկ դրամագլուխներ կազմելը հաճախ կապվում ե զանազան ձեռնարկումների հետ, վորոնց նպատակն ե ոժանդակել կոռպերատիվի անդամների գյուղատեսական արտադրություններին՝ ինչպես են օրինակ՝ գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների վարձակայաններ, կենդանիների աղնավացեղ տեսակների զարգացնող... վորձնական-ցուցադրական դաշտեր և այլն: Այդպիսի հիմնարկների գոյությունը կոռպերատիվի անդամներին այնքան մեծ ոգնություն ու աջակցություն են տալիս, վոր այդ կարիքի համար պիտանի հատուկ դրամագլուխների գանձումը, յեթե վոչ նվիրատվությունների միջոցով, ապա կոռպերատիվի ստացած ոգութից հատկացումներ կատարելու ձանապարհով, սովորաբար վոչ մի առարկության չի հանդիպում:

Քաղաքային լեվ բանվորական կոռպերատիվներում սովորաբար այդ հատուկ գումարները կարող են գործադրվել բանվորական մասսայի այն կարիքների բավարարման

համար, վորոնք կապված են բանվորական բնակարանների կառուցման և կահավորման, մանկական տներ ու մոռուներ հիմնելու և այլ նման խնդիրների հետ: Վերջապես հատուկ դրամագլուխները չափազանց կարենը նշանակություն ունեն նաև կուլտ-կրթական աշխատանքների համար՝ ընթերցարանի, դրամարանի, դպրոցի, ակումբի և այլն: Բոլոր յերկրների կոռպերացիաների փորձը հաստատել ե մի կայուն սովորություն:—դա վերոհիշյալ բնույթը կրող կոռպերատիվ լուսավորության աշխատանքի համար կոռպերատիվի զուտ վաստակից վորոշ տոկոս հատկացնելն է: Այդ բոլոր միջոցների ամրացման ամենալավ ձեզ՝ հատուկ դրամագլուխներ կազմելու սիստեմն է:

ԱՆԴԱՄՆԵՐԻ ԼՐԱՅՈՒԹԻՉ ՊԱՏԱՍԽԱՆԱՑՎՈՒԹՅՈՒՆԸ

Կոռպերատիվ մասսայական փոխոգնության սկզբունքներն իրենց հատուկ արտահայտությունն են գտնում կոռպերատիվի անդամների, այսպես կոչված, լրացուցիչ պատասխանատվությամբ վոր ունեն նրանք գեպի կոռպերատիվը: Սպառկոռպերացիայի նորմալ կանոնադրությամբ կոռպերատիվն իր պարտավորությունների հանդեպ պատասխանատու յեւ իր ամբողջ ունեցվածքով, և բացի այդ՝ նաև իր անդամների լրացուցիչ պատասխանատվությամբ: Այդ նշանակում ե, վոր բացի կանխիկ մուծած դրամից՝ իր փայավճարներից՝ ամեն մի անդամ պարտավորվում ե, պետք յեղած գեպքում, կոռպերատիվի հնարավոր ֆինանսները և այդ ֆինանսներից գոյացած պարտքերը ծածկելու համար, վճարել ևս վորոշ գումար, վոր մի քանի անդամ ավելի յեւ լինելու նրա վճարած պարտադիր փայից: Տարբեր կանոնադրություններում տարբեր են լինում պարտադիր փայի և լրացուցիչ պատասխանատվության գումարի փոխհարաբերությունը: Շատ կանոնադրություններում այդ պատասխանատվությունը հստակ է պարտադիր փայավճարի տասնապատիկին: Բայց սովորաբար այդ պատասխանատվությունը չի անցնում յերեքպատիկ կամ հնգապատիկ չափից: Հայտնի յեւ, ինարկե, վոր ինչքան բարձր և լրացուցիչ պատասխանատվության չափը, այնքան ավելի մեծ ե լինում կոռպերատիվի ամրության նկատմամբ յեղած վատահությունը և այնքան ավելի հեշտ և լինում վարկ ստանալ մինչև իսկ սեփական (փայավճար և այլն) փոքր դրամագլուխներ ունենալիս: Բայց

մյուս կողմից՝ պատասխանատվության այդպիսի բարձր չափը
շատերին կարող ե վախեցնել և խրանեցնել կոռպերատիվից,
ուստի պատասխանատվության շատ բարձր չափ չպետք ե
սահմանել.

Հիշեք կոռպերատոր. — ԱՆԴԱՄՆԵ-
ՐԻ ԼՐԱՑՈՒՅԹԻ ՊԱՏՍՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ՄՏՏՅՈՒ, ԲԱՅՑ ՊԱՏՍՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ.
ՆԵ ԶԲՉԱՓՄԶԱՆՑ:



ՀՀ Ազգային գրադարան



NL0208050

